

## ԴԱՍՏԻՆՐԱԿՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ <sup>1)</sup>

1.

Մեր զէքուրդի հռչակաւոր ուսուցիչ Լանդֆոխար մի օր 1808 թուականին դասարան մտաւ իւր սովորական ուսուցիչ աւանդելու: Նա այս անգամ մէնակ չէր, այլ իւր հետն էր նաև մի օտարական մի ութնամեայ մանուկի ձեռքը բռնած: Երբ որ մանուկին բազմեցրին վերջին նստարաններից մէկի վերայ, սկսուեցաւ դասացուցակի կարգի համեմատ՝ յունարէնի դասը, որ և իսկոյն գրաւեց նորեկի ուշադրութիւնը: Դասի կիսին, ի մեծ զարմանս աշակերտաց, յանկարծ ուսուցիչը դիմեց մանուկին, որին «Կարլ» անուն տուեց, որ շարունակէ, սակայն զարմանքը իսկոյն աւելացաւ, երբ որ

---

1) 1857 թուականին գերմաներէն լեզուով հրատարակուեցաւ ԴԱՍՏԻՆՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ Վերնագրով մի գիրք անյայտ հեղինակից, որի մէջ զետեղուած են 15 հատ իրական կեանքից առնուած դաստիարակութեան պատմութիւններ, ապացուցանելու համար, թէ նոյն իսկ երեւելի մանկավարժներ ինչպիսի խոշոր սխալներ են անում, եթէ մանուկի անհատականութիւնը ի հաշիւ չեն առնում իրանց գործում: Այլ է ընդհանուր մանկավարժութեան կանոններ գիտնալ եւ մտած տառի պէս գործ դնել, եւ այլ է «մանկավարժական բանականութիւն եւ մանկավարժական ոգի» ունենալ, ինչպէս որ ասում է անյայտ հեղինակը, եւ այնպէս բաց աչքով առաջտորդել մանուկին իւր ուսման եւ կրթութեան մէջ: Այդ պատմութիւնները գործնական մանկավարժութիւն են, խիստ կարեւոր մաս՝ նաեւ մեր մանկավարժների համար: Թէ որքան հմուտ ձեռքով են գրուած նորա, յոյս ունինք, թէ իրանք ընթերցողները կը կարողանան ըստ արժանւոյն գնահատել: Այդ պատմութիւնները հայերէնի վերածելով, թարգմանիչը շատ անգամ միայն քաղուածքներ է արել, աւելորդ անունները, թուականները, մանրամասնութիւնները դուրս ձգելով, որովհետեւ հայ ընթերցողի համար նորա ընաւ նշանակութիւն պիտի չունենային: Ժամօթ. թարգմանիչ:

պատուէր ստացողը, առանց բնաւ շփոթուելու, ոչ միայն կարգաց իրան անծանօթ Պրուտարքոսից մի գլուխ, այլ և բաւական վարժ կերպով գերմաներէն թարգմանեց և ընթերցածի մասին ուսուցչի բազմաթիւ բերականական հարցմունքներին՝ ճիշտ պատասխաններ տուեց:

Ապա մանուկի ձեռքը տուին Յուլիոս Կեսար, և իրան ցոյց տուած հատուածը նա թարգմանեց նոյնպէս առանց դժուարանալու. լատիներէնի վերլուծութիւնն էլ շատ յաջող անցաւ: Այնուհետև մանուկը թարգմանեց կեանքում չը տեսած մի իտալերէն գրքից մի քանի երես, որ ուսուցիչը բերել էր հէնց այդ նպատակի համար, և սկսեց հօր հետ խօսել այդ լեզուով: Եւ որովհետև դասարանում ֆրանսերէն գիրք չը գտնուեցաւ, ուսուցիչը բանաւոր կերպով քննեց այդ լեզուից, ուր մանուկը այնպէս արագ արագ պատասխանեց իրան ուղղած հարցմունքներին, որ կարծես թէ մայրենի լեզու էր բանեցնում:

Պատի վերայ կախ տուած հին Յունաստանի քարտէզի աւթիւ նա սկսեց մի առ մի թուել այդ աշխարհի նշանաւոր երկիրներն ու քաղաքները, նկարագրել նոցանից իւրաքանչիւրը և պատմել նոցա երևելի մարդկանց սերագործութիւնները: Եւ երբ որ յիշատակուեցաւ Սինոպը, իսկոյն յարակցեց. «Դա այստեղ չէ», և մի ուրիշ քարտէզ մատնացոյց անելով, շարունակեց. «մենք պէտք է Սև ծովի ափին փնտռենք այդ քաղաքը»: Գնաց և տեղն ու տեղը ցոյց տուեց Սինոպը, պատմեց նաև Դիոգինէսի պատմութիւնը, որ այն քաղաքում է ծնուել: Ուրիշ շատ հին աշխարհագրական անուններ ևս ասաց, նոյնպէս և նոցա նոր անունները: Վերջապէս երից կանոնի մի քանի խնդիրներ լուծեց բանաւոր կերպով:

Եթէ ակնյայտի կերպով ապացուցուեցան ութնամեայ հասակի համար չը լսուած այսքան ծանօթութիւնները, աւելի աչքի էր ընկնում մանուկի քաջաւողովութիւնը և մանաւանդ նորա անպաճոյճ համեստութիւնը, որովհետև նա կարծես չէր էլ նշմարում, թէ ինչպիսի հրաշք է երևում ինքը բոլոր աշակերանների առաջ:

Այդ օտարականն էր քարոզիչ դոկտոր Վիտտէ՝ Հալլէի մօտ Լրեառու գիւղաքաղաքից, իսկ վաղահաս ուսուցիչականը՝

նորա որդին: Լանդֆոխար աշակերաների առաջ քննելու էր բերել այս մանուկին, որպէս զի շարժէ նոցա նախանձը, բայց հայրը համաձայնել էր այս բանին միայն այն պայմանով, որ մանուկի համար գաղտնի մնայ քննութեան բուն դիտաւորութիւնը:

Այս սքանչելի մանուկի համբաւը խիստ մեծ իրարանցում պատճառեց ոչ միայն Մերզէբուրգի մէջ, այլ նաև աւելի հեռաւոր շրջաններում. ամէն տեղ սկսեցին խօսել, թէ  $7\frac{3}{4}$  տարեկան մանուկը այնքան ծանօթութիւն ունի հին և նոր լեզուներից, որքան որ և ոչ տասններեք կամ տասնւէորս տարեկանը կարող է ունենալ: Լրագիրները դղրդացին, մէկմէկուց արտասպելով Մերզբուրգից հասած լուրը, թէ նոր և անօրինակ աստղ է բարձրանում: Ոմանք անհաւատալի համարելով այս տեղեկութիւնները սկսեցին յիշեցնել պատմութեան մէջ յայտնի վաղահաս կրթութեանց ապարդիւն վախճանի օրինակներ. միւսները կարծում էին, թէ թղթակիցները մանուկի յառաջագիմութիւնները նկարագրել են խիստ չափազանցութեամբ կամ գուցէ և մասամբ մոլորուած. իսկ այլք բացէիբաց պնդում էին, թէ այդ բոլորը խաբերալութիւն է:

Այսպէս հետաքրքրուած մարդիկ և կասկածողները կամ անձամբ գալիս էին Լոխաու աւանը կամ հօրն ու որդուն հրաւիրում էին իրանց մօտ և թերահաւատութեամբ քննում էին մանուկին, որպէս զի իսկութիւնը ի յայտ ածեն: Սոցա կարգում էին մի շարք իշխաններ, բարձրաստիճան մեծատուններ, ուսումնականներ, ուսուցչապետներ, մանկավարժներ, տեսուչներ, խմբագիրներ, բանասէրներ. բայց ամենքը հիանում և գովասանական վկայութիւններ էին տալիս: Նոցանից մէկը հօրը գրեց. «Ոչ պատմութիւնից օրինակ գիտեմ, և ոչ իմ փորձառութիւնից, թէ այդ հասակի մանուկ այդչափ առաջ գնացած լինի. ես չեմ կարծում, որ պատմութիւնից յայտնի վաղահաս մանուկները՝ նոյն հասակում նոյնչափ առաջագիմութիւն ունենային: Ամենայն տաղանդաւոր պատանի կը գոհացնէ նոյն իսկ խստագոյն հարցաքննողին, եթէ տասնւեութ տարեկան հասակում այնքան ծանօթութիւններ ցոյց տայ, որքան որ տեսանք ձեր մանկահասակ որդուց: Ինձ աւելի զարմացրեց դուրս դատողու-

Թեան հասունութիւնը և սրտի անմեղութիւնը: Գորա մարմնական կազմութիւնը ամուր է և մանկական աշխուժութիւնը իւր սեղը:

Այն ժամանակուայ ամենամեղանի մանկավարժն էր արքունի դպրապետ Նիմայէրը Հալլէում: Սա չքամեցաւ քննել Վարլ Վիտտէին, Թէպէտ հայրը Թախանձանօք խընդրում էր: Ո՞վ գիտէ Թէ դպրապետը ինչ էր մտածում. գուցէ դա էլ մոլորութիւն էր համարում այնքան փառաբանած յառաջադիմութիւնները, կամ գուցէ սկզբունքով նշանակութիւն չէր տալիս վաղաժամ հասունութեան, կամ վերջապէս մի ուրիշ պատճառ պէտք է ունենար, որ անուշադիր Թողեց հռչակուած գործը: Սակայն նորա ստորագրեալ ուսուցիչներինց ոմանք եկան Լոխաու Վարլին քննելու համար, և նոքա ոչ մի խաբէբայութիւն չգտան: Նոցանից մէկը, որ մանուկին արդէն երկու անգամ քննել էր, երրորդ անգամ գալու ժամանակ հետը բերեց մի 17-դ դարու լատիներէն գրուած իրաւաբանական գիրք և մանուկի առաջ բաց արեց յառաջաբանի խրթին կտորը: Սա կարգաց իմաստալից առողանութեամբ, և այնպէս լաւ Թարգմանեց, որ անհաւատը էլ չըկարողացաւ զսպել իւր զարմանքը և բացականչեց: «Ձէ, անիծուին չար զօրութիւնները. ի՞նչպէս հաւատամ, Թէ այս գիրքն էլ բերան է սերտելու: Իսկ երբ որ հայրը հարցրեց, Թէ ո՞վ է ասում, որ իւր որդին բոլորը անգիր գիտէ, ինչ որ Թարգմանում է, նա պատասխանեց, Թէ բազմութեան կարծիքն ու խօսքն այդպէս է:

1809 Թուականին այս՝ անօրինակ մանուկը իւր հօր հետ եկաւ Լայպցիգ համերգ լսելու, ուր նոքա շատերի հետ ծանօթացան: Ամբողջ ուսումնական աշխարհը, հոգևորական և աշխարհական, տեսուչ և ուսուցիչ, բանասէր և խմբագիր ուղեցան իրանց աչքով տեսնել մանուկի յառաջադիմութիւնները: Այստեղ էլ քննութեան արդիւնքը ամենքին յայտուշ կրթեց, որոնք ևս շատպեցին հրապարակ հանել իւրեանց վկայութիւնը: «Աշխարհագրութեան և բնական պատմութեան հիմնաւոր տեղեկութիւններ ունի նա», ասում է մէկը, «մանաւանդ քաջ գիտէ հին Հռոմի և Յունաստանի աշխարհագրութիւնը: Սպանիայի բարտեզի վերայ զարմանալի արագութեամբ գտնում էր ամենայն քաղաք, որ հարց-

նում էինք: Միւս երկիրների վայրերն էլ ճանաչում է նոյն-  
 չափ հաստատութեամբ: Նորա արտասանութիւնը խիստ կա-  
 նոնաւոր է: Իսկ առաւել զարմանալի է, որ այս մանուկը  
 դատողական մեծ ոյժ ունի, որ նա երկու և աւելի առար-  
 կաներ համեմատելիս՝ շուտ գտնում է գլխաւոր կէտը, և  
 որ իւր պատասխաններում երեւցնում է լուրջ մտածու-  
 թիւն, կշռադատութիւն և սրամտութիւն: Մի ուրիշը կար-  
 լի ծաղկեալ առողջութիւնը, իմաստուն աչքերը և մանկա-  
 կան աշխոյժը փառաւորելուց յետոյ, այսպէս է գովում նո-  
 րա լեզուագիտութիւնը. «Ես տեսել եմ նորան հասակակից  
 և աւելի փոքրահասակ մանուկներ, որ ճուռողել են չորս  
 լեզուով, զորօր. Լիֆլանդիայում սովորաբար եօթն և ութ-  
 նամեայ մանուկները խօսում են ֆրանսերէն, գերմաներէն,  
 ռուսերէն և լեթերէն, սակայն այսպիսի թուրքակի շաղա-  
 կրատութիւնը չը պէտք է շփոթել գիտակցական լեզուագի-  
 տութեան հետ, որ այս մանուկը ցոյց է տալիս իւր լա-  
 տիներէնի, յունարէնի, ֆրանսերէնի, անգլիերէնի և իտա-  
 լերէնի յառաջագիմութիւններով, և որ հագիւ թէ տաս-  
 նեւութ տարեկանից յուսալ կարելի էր: Ես նորա առաջ  
 դրեցի աւելի խրթնաբան և դժուար գրքեր: Այդ չնաշ-  
 խարհիկ մանուկը վարժ ու հասուն մտքով գտնում էր ու-  
 զիդ իմաստը և ամենակնճիռ ոճերը թարգմանում էր սի-  
 բուն: Պակաս զարմանալի չէ նորա միամիտ ոգին և մանկա-  
 կան կայտառութիւնը. նորա մէջ ոչ մի հետք չը կայ, որ  
 ապացոյց լինի թէ նա ոյժերից վեր աշխատել է»:

Այնուհետև սկսեցին նաև թագաւորական պալատնե-  
 րում հետաքրքրուիլ այս նոր երեւոյթով, մինչև որ քարո-  
 զիչ Վիտաէն լուր առաւ, թէ Սաքսոնիայի թագաւորը հա-  
 ճութեամբ կ'ուզենար, որ նա իւր որդու հետ Լայպցիգ տե-  
 ղափոխուի, ուր իսկոյն թագաւորական թոշակ կըստանայ:  
 Կամաց կամաց խնդիր զարթեցաւ, որ մանուկը սկսէ հա-  
 մալսարան յաճախել, թէպէտ հասակի փոքրութիւնը մեծ  
 արգելք էր համարուում: Ուստի ցանկալի համարուեցաւ, որ  
 կարլը մի անգամ էլ քննուի համբաւաւոր Յոմասշուլէի տես-  
 չի ձեռքով, որ և 1809 թ. դեկտեմբերի 12-ին վկայու-  
 թիւն տուեց այս խօսքերով. «Ես ընարեցի դժուար վերժա-  
 նելի գրքեր նորա համար (որ այն ժամանակ 8<sup>1</sup>/<sub>2</sub> տարե-

կան էր)։ բայց նա այնպէս գեղեցիկ թարգմանեց, որ լիովին հաստատեց իւր մասին տարածուած մեծամեծ համբաւները։ Իմ նշանակած հատուածները թարգմանելիս՝ նա ոչ միայն ապացուցեց բառերի մեծ պաշար զանազան լեզուներով, այլ և հնախօսութեան ընդարձակ տեղեկութիւններ, հասուն դատողութիւն, մաքի զգաստութիւն և հոգեկան միւս կարողութեանց այնքան գերազանցութիւն, ինչքան որ այդպիսի հասակում դեռ ևս չէի տեսել։ Ուստի և իմ խորին համոզմամբ, այս մանուկի անօրինակ ընդունակութիւնները և հօր խիստ յաջող ուսուցանելու և դաստիարակելու եղանակը՝ արժանի են ուսումնականների ուշադրութեան և խորհրդածութեան։ բացի սորանից, յանուն գիտութեանց յառաջադիմութեան և դաստիարակութեան արուեստի նըպաստման, ես կարևոր եմ դատում, որ մեծ ապագայ խոստացող այս հանձարեղ մանուկի առաջ բացուի համալսարանի դուռը, ուր որ փառքով մտնելու ընդունակ և պատրաստ է, և ոչ թէ նախապաշման պատճառով արգելքներ առաջ բերուին և այն բարի յոյսերը ոչնչանան, որոնց նա արժանի է։

Այս ուսումնական և մեծ հեղինակութիւն վայելող մանկավարժի վկայութիւնը մատուցուեցաւ համալսարանին, իսկ այն տեղից առաքուեցաւ Դրեզդէնի նախարարութեան, որից ապա թոյլտուութիւն ստացուեցաւ մանուկին ընդունել Լայպցիգի ուսանողների շարքում։ Համալսարանը միևնոյն ժամանակ խնդրել էր, որ Լայպցիգի մէջ ապրելու համար գէթ յընթացս երից ամաց նպաստ տրուի հօր և որդուն (քանի որ հասկանալի պատճառով առաջինը չէր կարող երկրորդից բաժանուի)։ Այս բարեխօսութիւնը չը յուսացած հետևանք ունեցաւ։ Փոխանակ խնդրած տարեկան 300 թալէր նպաստի՝ 600 էին նշանակել, բացի ձրի բնակարանից և երկու համալսարանական թոշակից, չհաշուելով և այն, ինչ որ թագաւորը մտադիր էր առանձնապէս շնորհել։ Հայրը սկսեց վարանել, թէ այսուհետև ինչպէս շարունակէ որդու ուսումը։ Եթէ Լոխաուի մէջ միսիայն իւր առաջնորդութեամբ այն ուսումը շարունակուի, արդիւնքը մեծ չի լինի։ Իսկ միւս կողմից վտանգաւոր էր համարում որդուն մեծակ ուղարկել որ և է համալսարան, կամ օ-

տար դաստիարակի հսկողութեան ապաւինել, որ մանուկի հոգեկան պէտքերը չբարկտի կարողանայ ըմբռնել: Հօր ցանկութիւնն էր, որ ինքը անբաժան մնայ որդուց նաև համալսարանական կրթութեան ժամանակ: Իսկ այս ծրագիրը գլուխ բերելու համար բաւական չէին արդէն առատաձեռնութեամբ առաջարկուած Լայպցիգի միջոցները, որովհետև հայրը ստիպուած պիտի լինէր թողնել քահանայական պաշտօնը և իւր որդու համալսարանական ուսումն վերջանալուց յետոյ՝ ընդ միշտ զուրկ մնալ ոգեպահիկից:

Որպէս զի այս դժուարութիւնները վերանան, քարոզիչ Վիտտէն խնդրագրով դիմեց զանազան կառավարութիւններին, որ իրան քահանայի կամ ուսուցչի պաշտօն տան համալսարանական քաղաքներից մէկի մէջ, բայց ամեն տեղերից մերժում ստացաւ, թէպէտ բարեխօսներ շատ գտնուեցան: Յետոյ թոյլաւութիւն խնդրեց, թէ մինչև որ ինքը որդու ուսման կատարելագործութեան համար բացակայ լինի, առ ժամանակ իւր պաշտօնը մի օգնականին յանձնէ, իսկ ապա դարձեալ իւր պաշտօնի մէջ մտնէ, բայց հրաման չստացաւ: Վերջապէս փորձեց անձամբ ներկայանալ Կասսէլ իւր որդու հետ ի միասին:

Կասսէլում դոկտոր Վիտտէն համոզուեցաւ, որ նախարարութիւնը իւր և իւր որդու մասին խիստ աննպաստ կարծիք է կազմել: Արդէն նիմայերից մի յանձնարարական չունենալը՝ իրան շատ վնասեց Կասսէլում: Ապա նա իմացաւ, որ Հալլէից հակառակ գաղափարներ են հասել իւր որդու ընդունակութեանց մասին, նորան համարելով կեղծիքի կամ բռնի վաղահասութեան պտուղ, թէ հայրը փառասիրութեան պատճառով շլացնել ուղենալով՝ մանուկի մարմին, ոգույ և սրտի յատկութիւնները ընդ միշտ զոհում է: Եւ թէ այս կարծիքը ապացուցանվում է այն հանգամանքով, որ նա իւր որդուն ցուցամոլութեան համար աշխարհքում պատեցնում է, ամենքի խօսակցութեան նիւթ դարձնելով: Իսկ այս կարծիքները առ տեղեալն փոխուեցան, երբ որ նախարարութիւնը անձամբ ճանաչեց մանուկին, տեսնելով նորա հիմնաւոր ծանօթութիւնները, բնական անբռնազբօզարգացումը և կենդանի աշխոյժը, և խոստացաւ միջնորդել թագաւորի առաջ, որ հօր խնդրածը կատարուի:

Մինչև նա հայրենիք էր վերադառնում, ճանապարհին դարձեալ շատերը հետաքրքրուեցան և քննեցին մանուկին: Այդ ժամանակ մէկը գրեց Վիլանդին. «Մանուկին հոգով ու մարմնով աւելի առողջ և աշխոյժ գտայ, քան երևակայում էի. Հոմերոսի և Վերգիլիոսի փորձով ստուգեցի, որ նա այնքան բառական և քերականական ծանօթութիւն ունի, որ կարողանում է ամենամեծ յաջողութեամբ թարգմանել և իմաստը ճշտիւ ըմբռնել. զարմանալի է նորա բնական երագամտութիւնը, որ միայն խիստ ընդունակ գլուխների յատկութիւն է համարուած, որոնք մի քերականական և տրամաբանական կնճռի մթութիւնը նորանով են կարողանում փարատել, որ մնացած մասերի ընդհանուր կապակցութիւնից՝ ուղիղ լուծումը գուշակում են անսխալ: «Նշանաւոր է, որ նա կարգում է իմաստով, զգացմամբ և ազդուութեամբ: Ես յափշտակուած եմ, որ նորա մէջ շնչմարեցի ոչ մի հոգեկան ջորութիւն, որ միւսների վերայ գերազանցութեամբ իշխէր. այլ ընդհակառակ, նորա յիշողութիւնը, երևակայութիւնը, հասկացողութիւնը լաւ հաւասարակշռած են. իսկ առհասարակ ես աւելի գոհ մնացի, որ նա իրան մանուկ է ճանաչում և իւր մանկութիւնից ուրանալու սնափառութիւն չունի»:

Երբ որ Վիատէ քահանան տուն դարձաւ, արդէն նախարարից մի թուղթ գտաւ իւր անունով, որից երևում էր, թէ թագաւորը ժամանակաւոր արձակուրդ է շնորհում նորան, մինչև որ որդու կրթութիւնը վերջանայ, իսկ որդուն նշանակում է տարեկան 2000 ֆրանկ՝ Գէօտինգէնում ուսումը շարունակելու համար:

Փոքր ինչ տատամսելուց յետոյ, թէ արդեօք այս առաջարկութիւնը կամ Լայպցիգինը ընդունէ, հայրը գերագասեց առաջինը: Սկսեց պատրաստութիւններ տեսնել և անային հանգամանքները կարգի բերել, որ կարողանայ հանգիստ սրտով բացակայել Լոխաուից: Այս վախճանով հարկաւոր եղաւ ազգականներին այցելել և մինչև իսկ Բերլին գնալ: Այնտեղ բարեկամներից իմացաւ, թէ իւր որդու մասին ընդհանուր տարածուած կարծիքը այն է, իբրև թէ մի մանկավարժական փորձ յաջողեցնելու համար՝ նա մատնելով է կորստեան, թէ այժմ արդէն նա մաշվում և

նուազում է, իսկ 12 կամ 13 տարեկան հասակում պառաւած և կեանքից կշտացած կարող է մեռնել: Երևելի բժիշկները այսպէս էին դատում, բայց ամենից աւելի՝ Հուֆէլանդը: Հայրը որդուն տարաւ Հուֆէլանդի մօտ, որի հետ ծանօթ էր: Հուֆէլանդը չըծածկեց իւր կարծիքը, բայց հիմնաւոր հարցափորձից և քննութիւնից յետոյ ճանաչեց իւր սխալը և յօժարութեամբ տուեց այս վկայականը. «Աւրախութեամբ խոստովանում եմ, թէ տասնամեայ Վիտտէն, չընայելով որ վաղ է սկսել լեզունների վարժութիւնը և աշխատեցնել յիշողութիւնը, բայց և այնպէս մարմնով կատարելապէս առողջ է և իւր ֆիզիքական աճումը ոչնչով չի խանգարուել, մանաւանդ իւր մանկական բնութիւնը թէ հոգով և թէ մարմնով լիովին պահպանել է, որ անշուշտ պէտք է վերագրուի խիստ բանական առաջնորդութեան և սորա հետ կապուած մարմնական վարժութիւններին»:

Այս ճանապարհորդութիւնից յետոյ տեղի ունեցաւ դաշխումը դէպի Գեօտինգէն:

## 2.

Յայտնի է, որ մեր դարու սկզբին այնպիսի մեծամեծ քաղաքական դիպուածներ և փոփոխութիւններ ծնան, որ բոլոր մարդկութեան ուշքը յակամայս սյդ կողմը դարձաւ: Արդ՝ եթէ դաստիարակութեան մի մասնաւոր խնդիր, ինչպիսին էր մեր վերը պատմածը, հենց այդ ժամանակ լուսաւորեալ դասակարգերի հետաքրքրութիւնը այն աստիճան շարժեց, որ հասարակ ժամանակումն անգամ շատ չի նշմարվում, ապա ուրեմն անշուշտ նա մի աննշանակ և չընչին յայտնութիւն չէր: Եւ իրօք մատաղահաս Վարլ Վիտտէի երևոյթը զարմանալի և խորհրդաւոր էր մանկավարժական տեսակէտից: Այնուհետեւ մինչև այսօր իսկ այդ երևոյթը իւր կարեւորութիւնը չի կորցրել, մանաւանդ որ այժմ աւելի հնարաւոր է նորա իսկական արժէքը կշռել, որովհետեւ գործի բոլոր հանգամանքները աւելի որոշ են պատկերանում, քան առաջին տպաւորութեան ներքոյ, իսկ սկզբնական նախապաշարումը անձնական յարաբերութիւն-

ները և ցուցամուլ պաճուճանքը այլ ևս չեն կարող պղտորել խոհուն դատողութիւնը:

Այժմ կարծիք չը կայ, թէ փոքրիկ Ախտէն արդարև գերբնական յառաջադիմութիւններ է ունեցել, որ մինչև իսկ հրաշական պիտի կոչուին, եթէ համեմատենք այն արդիւնքների հետ, ինչ որ նոյն իսկ ամենսյաջող դէպքում դպրոցական և առանին կրթութիւնը կարողանում է արտադրել. աւելացնենք, որ անհերքելի է նմանապէս և նորամտական բարգաւաճութիւնը և սրտի պատուական կըրթութիւնը: Ասան զի այս մասին վերաբերեալ անուանի ուսուճականների, մանկավարժների ու բժիշկների վկայութիւնները այնպիսի գրաւական են մեզ համար, որ նոյն իսկ մանրակրկիտ և կասկածամիտ քննադատութիւնը չի կարողանայ ոչինչ խախտել ճշմարտութիւնից: Եթէ ոմանք վաղահաս մանուկի հաղուագիւտ երևոյթը անուշադիր թողուցին, այս բանը հեշտ է բացատրվում: Ականատեսներն անգամ պէտք է երկիւղ կրէին, թէ այդ զարմանալի մանուկին ըստպահում է եթէ ոչ վաղաժամ մահ, գոնէ յանկարծակի դադարում իւր հոգեկան զարգացման ընթացքում. նոքա պէտք է ենթադրէին, թէ այդ աշխոյժ հասակի բնիկ ուրխութիւնները պէտք է գնալով նսեմանան, որովհետև նա անշուշտ իւր կեանքը արդէն մաշել է, ամբողջ օր գրքերի հետ պատաղելով, և թէ իւր խելքի բռնազբօսիկ զարգացմամբ՝ անժամանակ պառաւելու է առաջնորդվում: Սորան աւելացնենք և այն հնարաւորութիւնը, որ հանձարի վաղահասութիւնը, նորա հրապարակաւ հանդէս գալը և բազած գովասանութիւնները, մանուկի սրտի մէջ կարող են կաթեցնել սնափառութեան և մեծամտութեան թոյնը: Պատանի Ախտէի ուսման և կրթութեան մասին աննպաստ կարծիքները մասամբ ևս ծագում էին հօր. բնաւորութեան պատճառով, որ թէև իւր յանձն առած գործում մեծ եռանդ և իմաստութիւն ցոյց տուեց, այնուամենայնիւ նշաններից երևում է, որ նա փոքր ինչ սնափառ, կամակոր և անհամբոյր մարդ էր, ուստի և նորա մասին անպատուաբեր լուրեր էին պատում, որ հարկաւ շատ անգամ չափազանց կեղծ, թշնամական, կամ բնաւ անհիմն պէտք է լինէին: —

Բայց թողնենք ենթադրութիւնները և աշխատենք իսկու-  
թիւնը իմանալ:

Փոքրիկ Վիտտէի կրթութեան շարունակութիւնը պատմե-  
լուց առաջ տեսնենք, թէ նա ինչ ճանապարհով այնպէս վաղ  
հասաւ իւր հասակից վեր հոգեկան զարգացման: Հայրը բաւա-  
կան պարզում է սյդ կրթութեան սկիզբը: Նա պատմում է,  
թէ ինքը անձնական փորձերով վաղուց ճանաչել էր կրթու-  
թեան զօրութիւնը, երբ ձր սյս դէպքերից առաջ Բերլինում  
դասեր էր աւանդում Գէդիկէի առաջնորդութեամբ: Յետոյ  
մի քանի տարի ուսուցիչ է եղել Իտալական Ձուիցերիա-  
յում, ուր մի եօթնամեայ փչացած մանուկին կարճ ժամա-  
նակում մարմնով և հոգով բողբոլին կերպարանափոխել է:  
Իւր մէջ միշտ խոր հաստատուած է եղել մանկավարժական  
սէր և սյն համոզումը, թէ դաստիարակը մեծ ազդեցու-  
թիւն կարող է ունենալ:

Մի անգամ ծանօթ քարոզիչների և ուսուցիչների շըր-  
ջանում խօսք բացուեցաւ, որ փորձով ապացուցուի դաս-  
տիարակութեան զօրութիւնը, յիշելով Հելուեցիուսի այն ա-  
ռածը, թէ ամենայն առողջակազմ մարդ կարող է կա-  
տարեալ մարդ դառնալ, եթէ համապատասխան կըր-  
թութիւն ստանայ: Վիտտէ բահանան, որի որդին դեռ չէր  
ծնուել, պաշտպանում էր այդ առածի ճշմարտութիւնը, բայց  
ամեն կողմից լսում էր հերքումն. սյդ ժամանակ նա խոս-  
տացաւ, թէ եթէ Աստուած առողջակազմ և հասարակ ըն-  
դունակութիւններով որդի պարգևէ իրան, նա կատարեալ  
մարդ կը դառնայ իւր առաջնորդութեամբ:

Հելուեցիուսի խօսքը, թէպէտ առաջին տեսութեամբ  
չափազանցութիւն է երևում, բայց անշուշտ մի ճշմարտու-  
թիւն է, եթէ քարոզիչ Վիտտէի մտքով ըմբռնենք: Սա այն-  
պէս էր հասկանում, թէ լաւ կազմուած և միջակ ընդու-  
նակութիւններով մանուկը աւելի կատարեալ մարդ կդառնայ,  
եթէ բազմահմուտ և խնամքով կրթութիւն վայելէ, առաջ-  
նորդուած վեհ սիրով, խոհեմութեամբ և անձանձիր տոկու-  
նութեամբ, — քան մի ուրիշը, որ լաւագոյն ընդունակութիւն-  
ներ ունենալով, ստանում է մի անշնորհք, անմիտ, անխամ  
կամ մի խօսքով գէշ կրթութիւն: Բայց լաւ կրթել կարողա-  
նալու համար նա անհրաժեշտ էր համարում, որ մանուկի

Հայրը հանգամանքներից կամ իւր ծնողներից հաղոււագիւտ կրթութիւն ստացած լինի, հարկաւոր առողջութիւն, ժամանակ, գիտութիւն և փորձ ունենայ. այլ և օժտուած լինի իւր որդուն կրթելու համար ներքին յօժարութեամբ և երկաթէ կամքով. ապա և չը պակասի իրան նիւթական կարողութիւն, իսկ արտաքին յարաբերութիւններում՝ անկախութիւն և ազատութիւն, որպէս զի իւր զաւակի կրթութեան պահանջմանց համեմատ՝ հնար ունենայ ըստ իւր տեսութեան ընտրել և փոփոխել կացութիւն և պարագմունքները, ծանօթներ ու բարեկամները, ծառաներ ու բնակութիւնը, այսինքն ապրել երբեմն առանձնութեան մէջ քաշուած, երբեմն մեծ աշխարհքում, երբեմն ճանապարհորդելով, մերթ գիւղում, ապա միշակ քաղաքում, վերջապէս մայրաքաղաքում կամ համալսարանական քաղաքում: Նա այս պայմաններով միայն հնարաւոր էր համարում սովորականից վեր կրթութեան յաջողութիւնը, որով մանուկի բոլոր զօրութիւնները և ունակութիւնները կարող են հասնել բարձր աստիճանի՝ բայց և հաւասարաչափ զարգացման:

Սակայն սորա այնպիսի պահանջներ են, որ երկրի երեսի վերայ չեն կատարուում: Իսկ Վիտտէի կարծիքով որքան իրական հանգամանքները աւելի մերձեանան գաղափարական պահանջներին, այնքան էլ իրական կրթութիւնը կը նմանի գաղափարականին:

Այն խօսակցութիւնից յետոյ շատ ժամանակ չանցաւ և 1800 թ. յուլիսի 1-ին քարոզիչ Վիտտէն օրհնուեցաւ Աստուծոց և որդի ունեցաւ: Նա չէր մոռացել իւր խոստումը և սկսեց ամենայն յարատեւութեամբ ի կատար ածել: Երբ որ վերջացաւ իւր որդու կրթութիւնը, շատերը արդիւնքից սյն ընդհանուր եզրակացութիւնն էին հանում, թէ Վարլը ի բնէ օժտուած է եղել արտաքոյ կարգի ընդունակութիւններով: Այսպէս էր կարծում նաև Պեսաւոցցին, որի հետ ծանօթ էր Վարլի հայրը: Սակայն ինքը հայրը հաւատացնում է, թէ իւր որդին ոչ թէ արտաքոյ կարգի, այլ սովորական, մինչև իսկ խիստ միջակ ընդունակութիւններ ունէր, որ անշուշտ անհաւատալի պիտի համարենք, եթէ «սովորական» և «միջակ»

բառերը այն չը նշանակեն, ինչ որ մենք հասկանում ենք  
 «լաւ» ասելով:

Մանուկի շրջապատող հանգամանքները, որտեղ նա  
 ապրում էր, յաջող էին: Լոխաուհի քահանայական եկամու-  
 տը՝ այնքան բաւարար էր, որ Վիտտէի ընտանիքը եթէ  
 փարթամ կեանք չէր վարում, գոնէ ապրում էր պարզու-  
 թեամբ և իւր վիճակի համեմատ վստելուչ կերպով: Տեղի  
 դրութիւնը Հայլէից 2 փամ հեռու է, իսկ Լայպցիգից՝ 4  
 փամ, հետեւագէտ դժուար չէր ուսումնական աշխարհի հետ  
 հաղորդակցութիւն պահպանել:

Հայրը լուսաւորուած և իմաստուն մարդ էր: Ինչպէս  
 գիտենք, նա վաղուց հակում ունէր դաստիարակչի կոչման  
 համար: Ունէր փորձառութիւն, լաւ էր ճանաչում մարդ-  
 կանց և աշխարհքը, զարմանալի եռանդ, յարատե կամք և  
 մի հազուագիւտ ոյժ ունէր՝ այնպէս ազդելու իւր շրջապա-  
 տողներին վերայ, ինչպէս որ իւր կամքն է եղել ազդել: Պաշ-  
 տօնը բաւական ազատ ժամանակ էր թողնում որդու կրթ-  
 թութեան համար և շուտ շուտ ճանապարհորդելու դէպի  
 Հայլէ, Մերզբուրգ, Լայպցիգ և ուրիշ տեղեր:

Մայրը մի հասկացող և կրթուած կին էր, որ սկզբում  
 թէպէտ հօր մտադրութիւնները որդու կրթութեան մասին  
 անիրագործելի ցնորքներ էր համարում, սակայն յօժարա-  
 կամ հետեւում էր նորա ծրագրին, կամ գէթ հակառակ  
 չէր գործում այն դէպքերում, երբ որ ինքը պլ կարծիք  
 էր ունենում:

Աշխիւնն էլ սովորական ծառաներին չէր նմանում: Մի  
 փոքր կրթութիւն ունէր, մաքուր գերմաներէն էր խօսում,  
 զգուշանում էր ծառայական կոպտութիւններից և գուհիու-  
 թիւններից, իւր վարքը բարոյագէտ բոլորովին մաքուր էր և  
 մանուկի կրթութեան համար ծնողների սահմանած կարգ ու  
 կանոնը՝ պահպանում էր ամենայն ճշտութեամբ:

Մանկան ֆիզիքական կրթութեանը նուիրվում էր ամենամեծ խնամք, բայց առանց աւելորդ անհանգստութեան  
 և երկիւղների. իսկ ամենից աւելի ուշադրութեան առարկայ  
 էր համարվում նորա մաքրութիւնը: Առաջին տարին ամե-  
 նայն օր, երկրորդ տարին օրամէջ, երրորդ տարին հանգա-  
 մանքին նայելով լողացնում էին, ապա լաւ չորացնում էին

մարմինը, լաթերի մէջ փաթաթում էին և իսկոյն դուրս էին տանում, եթէ եղանակը յաջող էր, իսկ եթէ ոչ՝ ցամաք անկողնու մէջ պառկեցնում էին, որ մորթից գոլորշին փոքր ինչ դուրս շնչէ. մեծ զգուշութեամբ աշխատում էին, որ անհոգութիւնից մանուկը չը մրսի կամ տաք շորերի մէջ չը խորովի: Սպիտակեղէնը ստէպ ստէպ փոխվում էր, իսկ մնացած հագուստը պարզ և բնական էր և միշտ մաքուր պէտք է լինէր: Մանուկին բարուրների մէջ պահեցին այնքան կարճ ժամանակ, մինչև որ տաամէրը յաճախում էր:

Որքան որ եղանակն ու հանգամանքները ներէին, մանուկը դուրսը պիտի լինէր բացօդեայ, իսկ այս նպատակին ծառայում էին ընդարձակ գուլթիւն ու պարտեզը, սոցա կից դաշտը և ապա մի անտառակ ևս: Մանուկին այդ տեղերում պատեցնում էին կամ գրկած, կամ փոքրիկ կառքով, կամ նստեցնում էին գեանին: Քալելը չէին շապեցնում, և թողնում էին որ այդ արուեստում բնութիւնը առաջնորդ դառնայ, մինչև անգամ նորան չէին օգնում, այլ թողնում էին որ մանուկը ապաւինէ ինքնօգնութեան, ինչպէս որ կարենայ, եթէ ծնողները գուշակում էին, որ մանուկը պէտք է վայր ընկնի, բախուի, կամ վառարանից դաղուի, սկզբում նոքա իհարկէ այդպիսի վնասների առաջը առնում էին, ապա հանգիստ հոգով կանխաւ իմաց էին տալիս միայն, թէ իրան ինչ վնաս է սպառնում: Եթէ նա այնուամենայնիւ չէր զգուշանում, թողնում էին որ կրէ իւր անխոհեմութեան վնասը, մինչև որ անձնական փորձերով խրատուի: Այս նպատակի համար շատ անգամ դիտամբ, թէպէտ և հարկաւոր զգուշութիւններով, փորձել էին տալիս կրակի և ջրի յատկութիւնները, յորդորելով, որ տաքացած վառարանին ձեռք տայ և բիչ մրկուի, կամ ջրի մէջ ընկնի, եթէ վնասը անզգալի պիտի լինէր:

Եւ ընդհակառակ մեծ հոգացողութեամբ զգուշանում էին, որ մանուկը խիստ շոգելուց յետոյ յանկարծակի չը հովանայ կամ ցուրտ ջուր չը խմէ: Այսպիսի դէպքերում ծնողները իրանք բարի օրինակ էին տալիս, պատմում էին այդ կարգի անզգուշութեանց վնասակար հետևանքները վէպի ձևով, նիւթը առնելով կամ իրական կեանքից, կամ դէպքի համեմատ տեղնուտեղը հնարելով:

Խաղի համար հայրը այն ճշմարիտ կարծիքն ունէր, թէ խաղալիկների շատութիւնը և առատութիւնը մնասակար է, որովհետև մանուկը կը դառնայ անյագ, չը գոհացող, անտարբերութեամբ կ'արհամարհէ պարզութիւնը, կամ կը սովորէ ամենայն ինչ փչացնել, աւերել, կործանել և կեանքի մէջ պատահող իրերը անխտիր միշտ իբրև խաղալիկ նըկատել: Ծնողներից երկուսն էլ կանոն էին արել, որ իրանց զաւակի հետ շատ խաղան անձամբ, ցոյց տալով մատներ, բանալիներ, փոքր ոստիկներ, տերևներ, ծաղիկներ և ուրիշ այսպիսի պարզ բաներ: Խանութի սովորական խաղալիկներից նա գրեթէ ոչինչ չէր ստանում. աւագ, խոհանոցի մանրիկ ամաններ, աղիւսակների մի տուփ, ահա միայն սոցանով հայր ու մայրը նորա հետ խաղում էին, կամ նա ինքն իրա հետ էր խաղում: Գուրսը նա վազվզում և շարժվում էր, ինչպէս մանուկները սովոր են սիրով խաղալ, առաջնորդութիւն էր ստանում զբաղուիլ բնութեան առարկաներով, չէին վախեցնում ոչ մի կենդանիով, իսկ յետոյ վարժեցնում էին նաև պարտիզի փոքրիկ աշխատութիւններով: Հօր սկզբունքների հակառակ էր, որ Վարլը առանց հսկողութեան ուրիշ աղաների հետ խաղայ. նա միայն այն ժամանակ էր թողնում նորան խաղալ իւր հասակակիցների հետ, երբ որ դէպքը նոցա իրար պատահեցնում էր, զորօր. այցելութեանց ժամանակ: Նա յիմարութիւն և նախապաշարմունք էր համարում այն գաղափարը, իբր թէ մանուկները առանց հասակակիցների ուրախ չեն լինի և բարեհամբոյր ու մտերիմ չեն դառնայ. և հաւատացնում է, թէ իւր որդու մէջ չի նկատել խաղակիցներ չունենալու պատճառով ոչ մի մնասակար հեռանք, և թէ ընդհակառակ նա միշտ կարողացել է առանց խորթանալու ընկերանալ ուրիշ աղաներին, իսկ նոքա սորա հետ սիրով միացել են:

Քնի մասին հայրը տարօրինակ կարծիք ունէր, որ թերևս լիովին խոտելի չը համարուի. նա ասում է, թէ մանուկի համար, գուցէ հասակաւորի համար ևս, երկար քունը բարերարութիւն է, եթէ միայն քունը խոր և առողջ լինի: Ուստի և թոյլ էր տալիս, որ Վարլը որքան աւելի հասակ առնէ, այնքան աւելի երկար քնէ, այնպէս որ ուսանո-

ղութեան ժամանակ, սորա քունը 10 և 12 ժամ էր տե-  
ւում: Բայց հէնց որ զարթնէր, իսկոյն զգաստ և սթափուած  
էր լինում և անկողնի մէջ մնալու պլ ևս հրաման չունէր:  
Ծիծ ուսելու ժամանակ նորան չեն օրօրել, և առ հասա-  
րակ նորան սովորեցրել էին որոշ կարգ պահպանել գիշե-  
րային հանգստեան համար:

Մնունդը ևս մատակարարվում էր խելացի սկզբունքով:  
Մայրը ինն ամիս ծիծ տուեց երեսային և այդքան ժամա-  
նակ իւր սովորական պարզ կեանքը բնաւ չը փոխեց, զոր-  
օր միշտ միայն ջուր էր խմում: Ծծկերը բացի մայրական  
կաթից ուրիշ ոչինչ չէր ստանում: Ծիծը միանգամից չը  
թողեց, այլ ժամանակ առ ժամանակ ստանում էր փշրած  
պակսիմատի ջրի ապուր, փոքր ինչ իւղախառն. ապա նորա  
կերակուրն էր կորկոտի ապուր, երբեմն կաթով եփած. այ-  
նուհետև ստանում էր նոսրացած մսի ջուր և վերջապէս  
միայն առաւօտները ապուր, իսկ մնացած ժամանակ իւր քսած  
հաց և միւս պինդ կերակուրներ: Հենց որ երրորդ տարում  
մտաւ, նա վարժուեցաւ ուսել, ինչ որ ծնողներն էին ու-  
սում, և սովորում էր ոչ մի կերակուրից չը խորշել: Եթէ  
մի կերակուր ախորժելի չը թուէր, սկզբում նա այդ կերակ-  
րից ստանում էր շատ փոքր բաժին: Մի և նոյն ժամանակ  
նորան հասկացնում էին, թէ այդպէս գարշելով ինքն իրան  
զրկում է համեղ կերակրից, թէ իւր արհամարհած կեր-  
կուրը՝ իւր ծնողների և ուրիշ մարդկանց համար խիստ ճա-  
շակով ուսելիք է: Բայց ի հարկէ ամէնից աւելի էր ազդում  
ծնողների օրինակը, որոնք սովորութիւն չունէին սեղանի  
կերակուրներից ջոկել կամ մէկը միւսից նախապատիւ անել:  
Քաղցրեղէններ միշտ չէին տալիս նորան, որպէս զի շարու-  
նակ քաղցրութիւնը լիզելով պարզ կերակրի ճաշակը չը  
խանգարուի:

Այս հրահանգութիւնները մանուկին մեծ օգուտ տուե-  
ցին: Նորա ֆիզիքական փոփոխութիւնները բնական կարգով  
էին ընթանում և առանց ցաւերի, զորօր. առամ հանելը,  
այլ և նա պաշտպանուեց մանկական հիւանդութիւններից:  
Այսպէս էլ հայրը աշխատեց որդուն առսղջ պահել պա-  
տանեկութեան հասակում, շատ շարժում անել տալով բաց  
օդի մէջ, պարզ խաղերով, ջուր գործածել տալով իրրև ըմ-

պելիք, մաքրութեամբ և ամէն բանում կարգ ու կանոն պահել տալով, յարմար հագուստով, խնդութեամբ և խելացի պարագմունքներով, մանաւանդ բնաւ չը բռնադատելով, որ Կարլը մի բան սովորէ յակամայս և անյօժար, խիստ վնասակար համարելով ոյժերից վեր մեքենական աշխատասիրութիւնը. և այս իւր ջանքերը կատարելապէս պսակուեցան:

Մանկան հոգեկան զարգացումն ևս արդիւնաւոր կերպով սկսուեցաւ ծնողներին միախորհուրդ եռանդով. նոցա գործ գրած միջոցն էր առաւելապէս ուսուցումն ըստ պատահական, որի մեծ խորհուրդը այս օր էլ դաստիարակիչները լաւ չեն ըմբռնում, և ուսուցանող խաղեր:

Արդէն մօր գրկի մէջ փոքրիկ արարածը սովորում էր ճանաչել և ճիշտ անուանել սենեակի, տան, գաւթի, պարտիզի բոլոր առարկաները: Այդ ամէնը հետզհետէ և թաղմիցս ցոյց էին տալիս, իւրաքանչիւրը անուանում էին պարզ և մէկին կերպով, ապա քաջալերում էին, որ ինքն էլ շէնորհքով կրկնէ անունը: Եթէ լաւ էր արտասանում, նորան համբուրում և գովում էին. իսկ հակառակ դէպքում զգալի սառնութեամբ ասում էին. «Կարլը գեռ չի կարողանում այս բառը արտասանել»: Այս խօսքը այնպէս էր ազդում, որ նա սկսում էր ճիգեր թափել, որ առարկաները ճանաչէ և ուղիղ անուանէ: Այդ ժամանակ նա խիստ հանդարտ պիտի խօսէր, ուստի և բարկութեամբ կամ անհամբերութեամբ չէին շփուեցնում, չէին սասանեցնում, այս միջոցով առաջն էին առնում ամենայն տեսակ կակազարանութեան կամ թերաբանութեան. մանկական կոչուած թոթովախօսութիւնը իսպառ մերժուած էր, ոչ ոք չէր ասում մուսուլ փոխանակ կովի, կամ միառն փոխանակ կատուի. և որովհետեւ մանուկը այդպիսի ձայներ չէր լսում, նա ուրեմն միւս մանուկների պէս կարեւորութիւն չունէր՝ լաւ արտասանութիւն սկսելու համար՝ նախ մոռանալ մի վատ սովորութիւն:

Հայրը և մայրը սրբազան կանոն էին սահմանել՝ որդու հետ և նորա ներկայութեան ժամանակ խօսել միշտ մաքուր գրական գերմաներէն և ընտիր դարձուածքներով, այն ևս միշտ բարձրաձայն, պարզ և հանգիստ: Ամեն կերպ աշխատում էին խուսափել մութ և խրթին ոճերից, աշխատում էին իմաստը լաւ որոշել: Ոչ նուազ հետամուտ

էին, որ շեշտն ու արտասանութիւնը ուղիղ լինի: Առաջին և երկրորդ գէմքի փոխարէն երրորդի գործածութիւնը (զոր օր. Կարլը՝ փոխանակ դու, հայրը՝ փոխանակ ես) միայն այն դէպքերում ներելի էին համարում, երբ որ պարզութեան համար անհրաժեշտ կարևոր էր լինում: Իւրեանց ծանօթներէց և բարեկամներէց ոմանք իհարկէ ուղիղ չէին խօսում, աւելի ևս տեղացի ռամիկները: Բայց այս հանգամանքը մանուկին չէր վնասում, որովհետև վաղուց գիտէր, թէ որն է սխալ և որը ուղիղ: Այսպիսի և ուրիշ անկանոնութիւններ տեսնելու ժամանակ, հօրից պատուէր էր ստանում, որ համբերող լինի և չը ծաղրէ. մի և նոյն ժամանակ այսպիսի ընդհանուր խրատ էր լսում, «դու այսպիսի բաներ դեռ շատ կը տեսնես. լաւագոն մարդիկ անգամ միշտ չեն խօսում և գործում այնպէս, ինչպէս որ իրանց վայել էր»:

Այս կերպով մանուկը շատ շուտ սովորեց մաքուր գերմաներէն խօսել և ամենայն միտք որոշ և ճիշտ արտայայտել: Եթէ իւր ասածի մէջ մի անճշտութիւն կամ շփոթութիւն էր երևում, իսկոյն կատակի ձևով և բարեմտութեամբ հասկացնել էին տալիս նորան իւր բառերից հետևող իմաստի ծռութիւնը: Մայրենի լեզուի այսպիսի վաղ իմաստասիրութիւնը և այն օգուտն ունեցաւ, որ օտար լեզուների ուսումնասիրութիւնը յետոյ խիստ հեշտացաւ:

Հօր գլխաւոր հոգսերից մէկն էր, որ մանուկը շատ առարկաների ծանօթութիւն ստանայ, ուստի և ծնողները հէնց առաջին տարիներում նորան իրանց հետ էին առնում, երբ որ գնում էին Մերզբուրգ, Հալլէ, Լայպցիգ, Վայսէնֆէլդ, Նաումբուրգ, Դեսսալու, Վիտտենբերգ և այլն, ուր որ նա շատ բան կարող էր տեսնել, ինչ որ տանը չէր տեսնի: Այդ ճանապարհորդութիւնները 3-դ և 4-դ տարին շատ անգամ կրկնվում էին, որպէս զի մի անգամ տեսածն ու սովորածը աւելի ևս տպաւորուի: Երրորդ տարում ութ շաբաթի չափ Լայպցիգ մնաց, չորրորդ և հինգերորդ տարում հօր հետ մինչև անգամ ոտքով գնաց Մագդեբուրգ, Հալլերշտադտ, Հարց: Հինգերորդ տարում աւելի ընդարձակուեցաւ աշխարհատեսութիւնը մինչև Բերլին, Ռոշտոկ և սկսուեցաւ ծովի ճանապարհորդութիւն: Մի տարուց յետոյ հայրը նորա հետ 8 շաբաթ Դրեզդէն մնաց, ուր տեսաւ

ուչ միայն հրաշալի շքակայքը, այլ և գեղարուեստների գանձերը զանազան թանգարաններում: Հայրը գիտութեամբ մի քանի օր մնաց Վեօնիգշտայնում. և որովհետև մի օր ներքևի ձորը ամբողջապէս ամպերով ծածկուեցաւ, իսկ վերև գմբեթացել էր երկնքի կապոյտ կամարը, այս մի բընական առիթ համարեց հասկացնելու համար, թէ ինչ է մշուշ, ամպ, անձրև, ձիւն, եղեամի, կարկուտ և այլն:

Նորան իրանց հետ տանում էին անխտիր ամենայն ընկերութիւն, համերգ, թատրոն և ուրիշ զանազան հրաշալիքներ տեսնելու: Ուստի և նա այնպէս գաղափար ունէր ողբերգութեան և թատրերգութեան մասին, ինչպէս և ջրաղացի և հողմաղացի մասին, այնպէս առիւծի, ջայլամի և փղի մասին, ինչպէս և խլուրդի և չղջիկի մասին, այնպէս աղահանքի և գիւղական շուկայի մասին, ինչպէս և Լայպցիգի տօնավաճառի և բովքի մասին, այնպէս չքաւոր վարձկանի խրճիթի մասին, ինչպէս և մեծատան պայծառ ապարանքի մասին, այնպէս պարահանդիսի մասին, ինչպէս և յուզարկաւորութեան մասին: Բայց այս բոլորի վերայ նա պէտք է ոչ թէ ապուշի պէս բերանաբաց նայեր, այլ ըստ հնարաւորութեան լաւ դիտէր և հասկանար: Ցեսածների և լսածների մասին ևս շատ անգամ հարցումներ էր ստանում, որոնք երկար ու բարակ զրուցատրութեան նիւթ էին դառնում, և նա քաջալերութիւն էր ստանում խօսել, պատմել, իւր տպաւորութիւններն ու գատողութիւնները յայտնել: Այսպէս նա վարժեցնում էր իւր ուշադրութիւնը, դատողական զօրութիւնը և միտք արտայայտելու կարողութիւնը, այն ևս այն հասակում, երբ որ ուրիշ մանուկներ հազիւ կարողանում են մի քանի բառ իրար հետ կապել՝ առանց խոշոր սխալների, — մինչև որ նա չէր դժուարանում իւր փոքր շքանի աւարկանների մտին գեղեցիկ ոճով և կապակցուած լեզուով խօսել և որոշ անդեկութիւններ աւել:

Մանուկը շարունակ այսպէս էր ուսանում դիպուկաժով, բայց առանց նշմարելու, թէ բան է սովորում: Նա անչափ շատ բան էր իմանում, բայց իւր իմացածները արուեստական գեգերմամբ և ըննութեամբ ստացած գիտութիւն չէր, մի խօսքով բնաւ գիտնականութիւն չէր: Նա իւր հոգեկան զօրութիւնները այնպէս նրբացրեց և կատարելագործեց, որ

կարողանում էր շատ շուտ ըմբռնել ամենայն առարկայի բնութիւն, իսկ դժուար խնդիրներում իւր բոլոր ոյժը գործ էր դնում, որ ոչինչ չը վրիպի իւր մտաւոր տեսութիւնից: Միևնոյն ժամանակ բնաւ չէր երևակայում, թէ աւելի է գործում, քան ինչ որ գործում է կամ պարտաւոր է գործել ամենայն մանուկ, ամենայն հասարակ մարդ: Աւերջապէս նա ուսանում էր սիրով, որովհետև զգում էր զանազանատեսակ գոհութիւններ և զուարճութիւններ և մանաւանդ իւր զօրութեանց աճումը: Այս առաւելութիւնը նորան խիստ նպաստեց, երբ որ յետոյ սկսեց գրքերից ուսանել:

Ուսուցանող խաղերը նմանապէս բարերար ազդեցութիւն ունէին նորա հոգեկան զարգացման վերայ և անզգայի սանդուղ դառան կանոնաւոր ուսումն սկսելու համար:

Նորա սիրելի զուարճութիւններից մէկն էր պատկերներ և պատկերազարդ գրքեր դիտելը: Հարկաւ ծնողները իւրաքանչիւր պատկերի բոլոր նշանաւոր մասերը մեկնում էին, իսկ յետոյ նորանից էին լսում բացատրութիւններ—կամ իբրև ուսուցիչ կամ իբրև աշակերտ: Մինչև որ նա կարգաւ սովորէր, շատ անգամ նոքա ամստեսութեամբ նկատում էին, «Ո՛ւր է, եթէ դու կարդալ գիտենայիր. այս պատկերը ներկայացնում է շատ սիրուն պատմութիւն. ահա լսիր, բայց ես այժմ ժամանակ չունիմ, որ պատմեմ»: Ապա եթէ ծնողները հեռանային, նա սկսում էր պատմութեան գիրքը անյուսութեամբ և սրտապակաս դիտել, որպէս այնպիսի մի յուռութք, որի ծածուկ զօրութիւնից չի կարողանում օգտուիլ, որովհետև չը գիտէ գաղտնիքը բացանող հմայական խօսքը: Երբեմն ինքը մի պատմութիւն էր հնարում այդ պատկերի համար, ինչ որ աւելի հաւանական էր համարում, և հաղորդում էր հօրն ու մորը, որպէս զի նոցանից իմանայ իսկականը: Այսպէս նորա մէջ քիչ քիչ զարկեց կարգաւ սովորելու սէր:

Այս խաղերը մանուկի համար այնպէս լուրջ բաներ էին, որ սովոր չէր պատկերները պատուտել կամ աղտոտել: Ուրիշ տների մէջ ևս եթէ պատին կախած պատկեր տեսնէր, սկսում էր ուշի ուշով զննել, կամ պատկերազարդ գրքեր էր խնդրում, որ ցոյց տան:

Պատկերների մասին պատմուածքները մի ուրիշ օգուտ

էլ ունէին: Նորա նպաստում էին բարսկան կրթութեան: Եթէ Կարլը մի փոքր մեղք գործէր, ծնողները ոչ մի խօսք չասելով այդ մասին՝ բաց էին անում գիրքը և փնտռում էին նորա մէջ մի չար կամ բարի մանուկի պատկեր, որ յայտնի էր Կարլին, և իրան ցոյց էին տալիս մատով: Կամ եթէ նա ուզում էր վարուել ոչ թէ ծնողների պատուէրների համեմատ, այլ իբրև մի չար մանուկ (Մարտին կամ Կոստանդ), որի պատմութիւնը նա արդէն լսել էր, իսկոյն ծնողները կարճ և ազդու կը բացականչէին, «էյ, Մարտին» կամ «Կոստանդ»: Շատ անգամ այսքանն էլ բաւական էր, որ նա թողներ իւր մտադրութիւնը և զգուշանար:

Կարգալու սէր ազգելու համար, մի կողմից սերտել էին տալիս փոքրիկ ոտանաւորներ, միւս կողմից զբաղեցնում էին տառերի խաղով: Որդու 4-դ տարին դեռ ևս լը լրացած, հայրը գնեց խոշոր գիրքով տառերի և կէտադրութեանց թերթիկներ բարակ տախտակների վերայ կպցրած: Նախ մի տփի մէջ ձգում էին միայն մանր գրի տառեր, որ մէկ մէկու յետևից խառն կարգով հանում էին, մանրամասն զըննել էին տալիս, անուանում և բարձր արտասանում էին: Մանուկը շատ շուտ սովորեց բոլոր տառերը, յետոյ սկսեց միմեանց հետ համեմատել, որով իւր մտածմունքը վարժվում էր: Այնուհետև էլ դժուարութիւն չը կար վանկեր և բառեր շարելու համար, մանաւանդ մանուկին յայտնի և սիրելի իրեր նշանակող բառեր: Այսպէս սկսուեցաւ կարգալու ուսումը 4-դ տարում:

Մի ուրիշ տառախաղ գործ էր դրվում աւելի ուշ հասակում: Սեղանի շուրջ նստում էին խաղացողներ, իւրաքանչիւրը տփից հանում էր մի երկու բուռն տառ և միւսներից ծածուկ բառեր էր կազմում: Ապա այդ շարուածը խառնելով, խաղացողը յանձնում էր իւր տառերը մի ուրիշին, որ նա իւրաքանչիւր բառի սկզբնատառը խաղացողից լսելով՝ իմանայ բառը և կազմէ: Հասկանալի է որ այդ ժամանակ հարց ու պատասխաններով կարելի է շարժել հետաքրքրութիւնն ու սրամտութիւնը և մտքին տալ զուարճալի պարագմունք:

Ինչ ընկերական խաղ որ սովորել էր հայրը Բերլինում, Լայպցիգում և ուրիշ անդերում, կամ եթէ ուրևի-

ցէ նկարագրուած կարգացել էր, բոլորը որդուն փորձել էր տալիս, միշտ միւսնոյն ժամանակ կնճիւնները դժուարացնելով, որքան որ խաղի կանոններով ընդունելի էին: Հայրը ճարպիկ աճպարարներին վարձատրոււմ էր, որ իւրեանց ձեռնածուծեան արուեստներից մի բանիսը իւր որդուն սովորեցնեն, և միւսների գաղտնիքը բացատրեն: Եւ այսպէս սկսեց մանուկը ոչ միայն զարմանալ ձեռնածուծիւնների վերայ, այլ և մտադրութեամբ հետամուտ լինել, որ գաղտնիքի բանալին գտնէ և շատ անգամ յաջողութեամբ գտնոււմ էր: Իսկ երբ որ նա իւր նոր հմուտութիւններով սկսոււմ էր շքրջապատող հանդիսականների ապշուծեան առարկայ դառնալ, իսկոյն հայրը զգուշանալով՝ աշխատոււմ էր մոռացնել տալ սովորածը. նա ուզոււմ էր միայն նպաստել, որ մանուկի միտքը բացուի և ոչ թէ նա սնափառութեան վարժուի:

Հայրը մտադիր չէր եօթը տարեկան հասակից առաջ որդուն կանոնաւոր դասեր տալ: Նա առ հասարակ չէր ուզոււմ այնպէս պատրաստել, որ որդին ուսումնական դառնար կամ ուսուցչապետ. աւելի ևս չէր ուզենայ նորա վաղահաս ուսումնականութիւնը: Նորա միակ ցանկութիւնն էր, որ որդին մարդ դառնայ այս բառի վեմագոյն նշանակութեամբ, այն ևս իւր առաջնորդութեամբ, որքան որ իւր հանգամանքները, գիտութիւնն ու փորձառութիւնը ներեն: Նորա ձգտումն էր, որ որդին նախ և առաջ կատարելապէս առողջ, ուժեղ, աշխոյժ և ուրախ պատանի մեծանայ: Ապա որ նորա հոգեկան և մարմնական զօրութիւնները ըստ հնարաւորութեան բազմակողմանի, հիմնաւոր կերպով և հաւասարաչափ զարգանան և ոչ մէկը միակողմանի կերպով չիշխէ ի վնաս միւսների: Եւ այսպէս սպառազինուած միայն, որդին այրական հասակոււմ պիտի հանդիսանայ մի ողջակազմ մարդ, որչափ կարելի է անկարօտ, իւր ընկերներին օգտակար, այսինքն թէ ինքը անձամբ բախտաւոր և թէ ուրիշներին բախտաւորեցնող: Հայրը այն չէր հոգոււմ, որ որդին դառնայ առաւելապէս մի մեծ լատինաբան, յունաբան, մաթեմատիկոս և այլն, կամ առ հասարակ որ իւր բռնագատութեամբ որոշուի որդու ապագայ վիճակը և պարագմունքը: Ընդհակառակ որդին այն պէտք է դառնար, ինչ որ

ինքը յօժար կամօք ապագայում ուզենար դառնալ, միայն թէ այնպէս բազմակողմանի կրթուած լինի, որ կատարեալ ընդարձակութիւն ունենայ իւր վիճակը ազատօրէն ընտրելու համար: Իսկ եթէ մասնաւորապէս ցանկայ ուսանող լինել, այդ դէպքում հօր ծրագիրը այն էր, որ որդին 18 տարեկան հասակից առաջ համալսարան չը մտնէ:

Այլ այս բոլոր մտադրութիւնները և նախակարգութիւնները փոխուեցան ակամայ և պատահական կերպով: Մասնակի հոգեկան զարգացումը անակնկալ և անբռնազօս կերպով այնպէս արագ արագ ընթացաւ, որ նա, հակառակ հօր ցանկութեանց, վաղաժամ գիտնական դարձաւ: Սկզբում հայրը դժգոհ էր այս բանից, բայց նոր ընթացքը բռնի կերպով դադարեցնել այլ ևս հնար չուներ, մանաւանդ որ իւր որդու մարմնական, հոգեկան և բարոյական վիճակների մէջ երկիւղալի նշաններ չէին երևում: Իւր ժամանակակիցների հետ ի միասին առաջ ինքն էլ ենթադրում էր, թէ հոգու վաղ զարգացումը միշտ կատարվում է ի վնաս մարմնի և սրտի, բայց յետոյ փորձով տեսաւ, որ այդ կարծիքը նախապաշարման ծնունդ է և համոզուեցաւ, որ իւր որդին վաղ հասունանալով մեծ օգուտներ ստացաւ: Նորա սրտի մէջ շատ շուտ հաստատուեցաւ կրօնական և բարոյական հիմքը. ուսումը դարձաւ նորա համար գրեթէ լոկ միայն մի խաղ, միայն մի հաճելի զբաղմունք, միայն զուարճալի ժամավաճառութիւն: Ուղիղ մտածելու, հարցնելու, պատասխանելու, խօսելու և պատմելու վաղ սովորութիւնը ամենքի սիրելի դարձրեց նորան, ուստի և նա ամեն շրջաններում ցանկալի անձնաւորութիւն ճանաչուեցաւ, որով առիթ էր ունենում շատ բան տեսնել, լսել և ուսանել և բազմատեսակ ուրախութիւններ վայելել: Երբ որ նորա լեզուագիտութեան և ուսումնական ծանօթութեանց համբաւը տարածուեցաւ, ազնիւ և ուսումնական, իշխան և հարուստ մարդիկ սկսեցին հովանաւորել նորան, նոցանից իւրաքանչիւրը աշխատում էր նորան ցոյց տալ և մեկնել նոր նոր և հետաքրքրական բաներ, որով նորա կրթութիւնը աւելի ճոխացաւ: Այս կերպով Կարլը հնգից մինչև վեց տարուայ ընթացքում այնքան բան լսեց, տեսաւ, զգաց, ինչ որ ուրիշը ամենայնով հանգամանքում հազիւ քսանից մինչև ե-

րեսուն տարուայ ընթացքում ձեռք է բերում: Հասկանալի է ուրեմն, որ խիստ վաղ ազատուեցաւ նախապաշարմունքներից և մտաւոր կարճատեսութիւնից: «Միթէ այս ամենը երջանկութիւն չէ՞, որ ամենայն հայր անշուշտ պատրաստ կը լինէր հազարներ վճարելով գնել, եթէ նոքա դրամով ստանալու բաներ լինէին» բացականչում էր հայրը: «Ոչ, ես զղջալու բան չունիմ, որ նա վԱՊՊ զարգացաւ»:

Այս առաւելութիւնները միայն այդ մանուկին օգուտ կարող էին բերել, առանց փնասի միւս կողմից. հոգու այդչափ վաղ զարգացումը ուրիշներին միշտ կարող էր փնասել: Նոյն իսկ Կարլ Վիտտէն վերջերը զգաց տոյժ. և հիմա դժուար է ժխտել, թէ նորա վաղ զարգացումից և իրան վիճակուած հռչակից իրօք անհերքելի փնասներ են գոյացել, որ ոգևորուած հայրը այն ժամանակ չէր նկատում:

## 3.

Խաղ և աշխատութիւնը հայրը նկատում էր այն ուղիղ սկզբունքով, թէ նոքա չը պէտք է շփոթուին, այսինքն որ խաղը աշխատութիւն չը դառնայ, և ոչ աշխատութիւնը՝ խաղ: Ուստի և աշխատելու ժամանակ որդուց պահանջում էր, որ իւր բոլոր ոյժը մէջը դնէ: Սկզբում աշխատութիւնը տւում էր օրական քառորդ ժամ: Որպէս զին սովորէ աշխատութեան ժամը լուրջ բան համարել, մի անգամ ընդ միշտ անպայման կերպով մերժվում էր ամենայն այցելութիւն, ամենայն հարցում որևիցէ անձից, ով որ դա լինէր, փոյթ չէր, այնքան ժամանակ, մինչև որ աշխատութիւնը տւում էր: «Ես այժմ չեմ կարող, մենք աշխատում ենք», ասում էր նա այս դէպքերում: դիտմամբ, որպէս զի մանուկը հասկանայ խօսքի բուն զօրութիւնը: Այս հնարը խոր սպաւորութիւն էր գործում մանուկի վերայ, այնպէս որ արդարև վարժուեցաւ աշխատութեան ժամը սրբութիւն համարել: Այսպէս նա սովորեց ոչ միայն լուրջ կերպով և ամենայն ուժով աշխատել, այլ և կարողութեան չափ՝ արագ: Իսկական ուսումն սկսուեցաւ, երբ որ Կարլը 4 տարեկան էր: Վիտտէ քահանան 1804 թուականին իշխանութիւ-

նից հրաման ստացաւ, որ գնա Զուլիցերիա Պետալոցցու ուսումնարանը այցելելու համար և այդ նոր մանկավարժական հաստատութեան մասին տեղեկագիր ներկայացնէ: Որովհետև ճանապարհորդութիւնը երկար տևեց, մայրը երկիւղ էր կրում, թէ Կարլը պարապ նստած զուր կը կորցնէ ուսման օրերը, ուստի սկսեց նորան կարգաւ սովորեցնել, համոզուած լինելով, թէ երբ որ հայրը դառնայ՝ նորան այդ բանով անակնկալ ուրախութիւն կը պատճառէ: Սակայն մանուկը ակորով չէր կատարում գրագիտութեան սերտողութիւնները, որովհետև իրան պատահում էին բազմաթիւ անհասկանալի բառեր, իսկ մայրը չէր կարողանում հօր սկզբունքների համեմատ ուսուցանել: Երբ որ սա վերադարձաւ, փոքր աշակերտը արդէն կիսատ կարդում էր: Հայրը այս բանը չը հաւանեց, բայց որովհետև չէր ուզում մօր սիրտը կոտրել, աշխատեց ուղղել գործը և յաղթել մանկան տհաճութիւնը. նա ձգտում էր մանուկի համար հաճելի կացուցանել կարգաւ, տաղտուկ աշխատութեան պետուղները շուտ և սիրով վայելել տալով: Այս վախճանով նա հաւաքեց ծիծաղաշարժ կարճ պատմութիւններ, որ մանուկը արդարև կարդում էր ուրախութեամբ, յօժարութեամբ և խնդալով կրկնում էր ընթերցածը: «Տեսնում ես», ասում էր հայրը, «ինչպէս քաղցր է գիր գիտենալը»: Այնուհետև տան բարեկամները մանուկին առաջարկում էին, որ զուարճութեան համար մի մի բան կարդայ իրանց: Այսպէս նա սկսեց ամենայն օր ավելի զբաղուիլ ընթերցանութեամբ. միև կողմից հայրը չէր դադարում գրքեր բերել, որ յագեցնէ որդու ընթերցանութեան քաղցը:

Ուսուցանելիս հայրը այն սկզբունքին էր հետևում, որ իւրաքանչիւր առարկայի սէր զգացնել տայ և սովորեցնէ միմիայն կարևորագոյն մասը հեշտ և հասկանալի կերպով: Իսկ այնուհետև նորան առիթներ էր տալիս, որ մտացած մասը ինքը լրացնէ, ստանալով գովասանք, խրախոյս և եթէ հարկաւոր լինի՝ նաև օգնութիւն:

Գրութիւնն էլ այսպէս սովորեց Կարլը: Յատուկ դասեր գրեթէ չէին սահմանած դորա համար. ծնողները շատ անգամ խօսում էին գրի օգտի մասին կամ իրար հետ, կամ նորա հետ և կամ նորա ներկայութեան ժամանակ ու-

րիշների հետ: Տեղն եկած ժամանակ, թողնում էին որ նա յոժար կամօք բան գրէ. այդ ժամանակ նորան չէին օգնում, կամ օգնութիւնը երկար չէր լինում, այն ևս արվում էր շատ խնդիր լսելուց յետոյ: Այդպէս ստիպվում էր նա սպած տառերը նկարել և—գրել: Երբ որ մի առ ժամանակ նորա անկատար գործքը ծնողաց ծիծաղն էր շարժում և վերջապէս ձեռագիր այբուբենն ստացաւ իւր խնդրանաց համեմատ, նա սկսեց այս էլ արտանկարել, մինչև որ գրել սովորեց:

Թուաբանութեան սկիզբը նոյն ժամանակ դրուեցաւ, երբ որ Կարլը կարգալ սովորեց: Պետաւլոցցու թուերի ուսումը հայրը անգործնական էր համարում: Նա խորհում էր գործնական հաշիւը այնպէս պարզել, որ փոքրիկ մանուկն անգամ արագ ըմբռնէ և հմտութեամբ վարէ: Եւ հէնց իւր 4 տարեկան որդու վերայ փորձեց իւր գիւտը: Օրական քառորդ ժամ նուիրելով թուական ամենապարզ վարժութիւններով էր զբաղեցնում նորան, և ահա փոքր թուաբանը սովորեց անսխալ և արագ հաշուել մտքում: Այս յաջողութիւնը այնպէս զարմացրեց նոյն իսկ հօրը, որ սա ասում էր, թէ ուսման սկզբից հազիւ մի տարի անցնելուց յետոյ, կարող էր փայլել իւր որդու թուաբանական հմտութիւններով, եթէ առհասարակ ցանկութիւն ունենար իւր որդով փայլել: Բայց երբ որ մի օր այդ վարժութիւնների դասին իւր ձեռքը մանուկի գլխին դրեց և նորան գովեց, նկատեց որ գլուխը տաքացել և մազերը թաց են: Նա զարհուրեց և որդու ջանասիրութիւնից վտանգ գուշակեց: Երբ որ հետևեալ օրը փորձը նոյնութեամբ կրկնուեցաւ, իսկոյն դադարեցրեց թուաբանութիւնը, մինչև որ մանուկը զգալի կերպով հասակն առաւ և հոգեպէս ու մարմնապէս աւելի ուժեղացաւ:

Օտար լեզուների և գիտութեանց ուսումը հայրը չէր ուզում որդու 7 տարեկան հասակից առաջ սկսել, իսկ մայրը շտապեցնում էր: Եւ հայրը այլ ևս չուզեցնալով ընդդիմանալ՝ սկսեց վեց տարեկան հասակում (հայրը կարծես շփոթում և միշտ ճշտութեամբ չի նշանակում թուերը, որովհետև իւր միւս թուերի հաշիւներից երևում է, որ մանուկը 5 տարեկան է եղել, երբ որ սկսել է օտար լեզու

ուսանել): Լօր կարծիքով օտար լեզուի ուսուցմասիրուծիւնը հեշտացել էր այն հանգամանքով, որ Կարլի հասկացողութիւնը բացուած էր և նա արդէն գերմաներէնին լաւ էր տիրում. նա սովորել էր մայրենի լեզուի հատ հաս բառերը ստուգարանել, ածանցել, հօլովել կամ խոնարհել, փոխանակել, տեղափոխել և այլն: Իսկ այս ծանօթութիւնները նա ձեռք էր բերել ոչ թէ անշունչ գրքերից, ինչպէս որ սովորութիւն է օտար լեզու ուսուցանել, այլ ստացել էր կեանքից, այսինքն տան, պարտիզի, դաշտի, անտառի, ընկերութիւնների, ճանապարհորդութեան մէջ, նայելով թէ հայրը ինչ միջոցներով էր նորան կենդանի ուսում տալիս:

Կարլը ինչ եղանակով որ մայրենի լեզուն սովորեց, այնպէս էլ ուսուցմասիրում էր օտար լեզուները: Նորա համար լեզու սովորելը մի պատերազմ էր միայն հատ հատ բառերի և նոցա ձևերի հետ, բայց որովհետև հայրը շատ հեշտացնում էր գործը, ուստի և այդ պատերազմը շարունակ և թեթեւ յաղթութիւն դարձաւ, ուրեմն վերջի վերջոյ մի զուարճութիւն: Այս պարագմունքն էլ Կարլի համար մի խաղ, մի ուրախ ժամավաճառութիւն դառնալով, նորա վերայ այնպիսի տպաւորութիւն էր գործում, որ նա բնաւ չէր երազում, թէ անսահման շատ բան է ուսանում:

Լեզուների ուսուցմասիրութիւնը հեշտացաւ նաև այն կարգով, որով նոքա իրար յաջորդեցին: Յաջորդութեան կարգը այս էր, թէպէտ յետոյ մասնաւոր փոփոխութիւն կրեց, ստորին գերմաներէն, հոլանդերէն, անգլիերէն, ֆրանսերէն, իտալերէն, սպանիերէն, լատիներէն և յունարէն: Բայց հայրը շատ շուտ անցաւ ֆրանսերէնի, որովհետև թէ շատ լաւ կարգում, խօսում և գրում էր այդ լեզուով և թէ որդին աւելի առիթ ունէր տանը և հասարակութեան մէջ լսել ֆրանսերէն խօսակցութիւններ:

Ֆրանսերէն լեզուի ուսումը մի դժուարութիւն ունի, այն է արտասանութիւնը, մանաւանդ ընթերցանութիւնը, սակայն Վիտտէ քահանան այդ արգելքը առ ոչինչ սեպեց: Այդ դժուարութիւնը յաղթելու համար բառերի մէջ ընտրութիւն էր անում. Կարլին տալիս էր նախ այնպիսի բառեր, որոնք գերմաներէն արտասանութիւնից տարբեր չէին հնչվում, ապա որոնք որ տարբերվում էին մասամբ միայն և

այն: Մի և նոյն ժամանակ լուրջ զբաղման հետ միացնում էր և կատակ: Ամեն ժամանակ, երբ սովորեցնում էր ֆրանսերէն տառի ուղիղ արտասանութիւնը, իսկոյն բազմաթիւ օրինակներով ցոյց էր տալիս այն դէպքերը, ուր որ կանոնը իրօք ստուգւում էր: Հետը չէր մոռանում զուարճաստուգութեամբ յարակցել՝ «երբ որ ֆրանսիացիք գրուածը արտասանում են, երբեմն մեզանից աւելի խենդութիւններ են անում, կամ ինչպէս որ արտասանում են, այնպէս չեն գրում»: Եւ կատակով սկսուածը կատակով էլ շարունակում էր, իբր թէ անմիտ բաների վերայ է խօսում, որովհետեւ նորա բացատրութիւններից հետևում էր, որ սովորած բաներից մի մասը կատարեալ արուեստ է, միւսը՝ հանելուկ է և երրորդը՝ խառնաշփոթութիւն, բայց ամենի մէջ տարածում էր լոյս և պարզութիւն: Ինչ որ կանոնից խիստ խոտորվում էր, այն յիշատակում էր մի կուշտ ծիծաղով և ուրիշ անգամ էլ տեղի անտեղի աշխատում էր կրկնել. զոր օր. եթէ ճաշի ժամանակ մի անտեղութիւն պատահէր, հայրը կասէր. «Հա՛, այս այնպիսի իմաստութիւն է, ինչպէս և monsieur բառի արտասանութիւնը»: Հայրը հաւատացնում է, թէ այս կերպով որդին ֆրանսերէն կարգաւ սովորեց այնպէս շուտ, որ ուրիշը կարող է չը հաւատալ:

Կարլը այնպէս պէտք է թարգմանէր ֆրանսերէնից, ինչպէս որ կարգում էր մի գերմաներէն գիրք: Նորա գըլխաւոր ջանքն էր, որ ընթերցածի իմաստը ամենաճիշտ կերպով ըմբռնէ: Ուրեմն եթէ մի բառ, մի դարձուած, մի նախադասութիւն պարզ չը լինէր, նա սյդ մասին սկսում էր մտածել, կամ հարցնում էր հօրը: Իսկ եթէ շտապում էր, այն ժամանակ հայրը հարցմունք էր տալիս: Մի խօսքով նա միշտ պիտի կամենար, որ ամենայն ինչ հասկանայ: Ուստի թարգմանելու ժամանակ Կարլի աջ կողմը դրած էր միշտ բառարան, ձախ կողմը քերականութիւն, որպէս զի նորա ամեն ըոպէ պատրաստ լինին իրան խորհուրդ և բացատրութիւն տալու:

Թարգմանելու ժամանակ Կարլը չէր հանգստանում, մինչև որ իւրաքանչիւր ասութեան իմաստը չըմբռնէր և գերմաներէն լաւ չարտայայտէր: Ուստի և միշտ անսխալ ի-

մանալ էր ցանկանում, արդեօք շփոթ երևեցած ասացուած եղակի է թէ յոգնակի, անուան է վերաբերում թէ բանի այլ մասնին, արական է թէ իգական: Կարևոր հետախուզութիւն էր համարում, արդեօք բայն ապառնի է թէ անցեալ, կատարեալ թէ անկատար, ներգործական թէ կրաւորական, առաջին դէմք է թէ երրորդ և այլն:

Հայրը գիտութեամբ չէր շտապում Փրանսերէն ուսուցանել, ինչպէս ինքը սսոււմ է, վաղահասութեան երկիւղ ու նենալով: Ուստի և խօսելուց չսկսեց և Փրանսերէն դասերին սկզբում նուիրեց օրական միայն քառորդ ժամ: Իսկ երբ որ մի քանի ամսից յետոյ նկատեց, որ որդին յառաջագիմութիւն է անում, սկսեց կէս կէս ժամ պարապել, մինչև որ հետզհետէ դասի տևողութիւնը տարուայ վերջը հասցրեց մի ժամի: Կարդալու համար Կարլը միշտ զուարճալի գրքեր էր ստանում, զորօր, Բոբինզօն: Մի տարուց յետոյ նա այնքան առաջ էր գնացել, որ առանց օգնութեան կարող էր թեթև գրքեր կարդալ: Ահա այժմ սկսուեցաւ նաև խօսակցութիւն Փրանսերէն լեզուով և մի և նոյն ժամանակ իտալերէնի հիմքը: Այս լեզուն էլ սյնպէս հեշտ էր Կարլի համար, որ Յ ամսից յետոյ նորա յառաջագիմութիւնը Փրանսերէնին հասաւ:

Այս պարապմունքներից լատիներէնին անցաւ դիպուածով: Ընս շատ անգամ նորան Լոյպցիգ էի տանում, պատմում է հայրը, ձև այն ժամանակ այցելում էինք համերգ, թատրոն կամ այլ և այլ նշանաւոր տեղեր: Մի անգամ պէտք է կատարուէր *stabat mater* (կայր առ խաչին մայր Քրիստոսի) եկեղեցական երգը և մուտքի ժամանակ ինձ տուեցին երգի խօսքերը տպագրուած: Այդպիսի բաներ միշտ Կարլին էի տալիս, որ կարդացնել և թարգմանել տամ: Նուագակցութեան ժամանակ մենք նստած էինք կողքի սենեակում և ասացի նորան. թարգմանիր թուղթը: Հէնց որ ձեռքիցս առաւ, իսկոյն ինձ նայեց շուարած: Սա Փրանսերէն չէ և ոչ իտալերէն. թերևս լատիներէն լինի: Ես ժպտալով պատասխանեցի. թող ինչ ուզէ լինի. արդեսք չե՞ս կարող թարգմանել, մի փորձիր, տես: Նա սկսեց, իսկ ես օգնեցի, մանաւանդ կոշտ լատիներէն բառերը աւելի կակուղ և իտալերէնի հնչմամբ արտասանելով, զոր օր.

stavat mader և այլն: Մի քանի բառեր, զոր օր. juxta աւելի օգնութիւն էին պահանջում և ես ասում էի. Այդ չը գիտես, դա նշանակում է... CRUCEM արտասանում էի իտալերէն հնչմամբ և այլն: Կարճ ասեմ, մինք մինչի վերջը թարգմանեցինք զուարճութեամբ և շուտ: Ապա ուրախացած նա ասաց. Եթէ այսպէս հեշտ է, այն ժամանակ ուզում եմ լատիներէն սովորել: Ի հարկէ հեշտ է, պատասխանեցի ես, իսկ հարկաւոր տեղը ես էլ կ'օգնեմ բեզ: Հեռեւեալ օրը գրավաճառների մօտ փնտռեցի լատիներէն Բոբինզոն և ուրիշ թեթեւ ընթերցանութեան գրքերս:

Ինն ամսում Կարլը այնքան լատիներէն սովորեց, ինչքան որ 6 ամսում իտալերէն էր սովորել: Գերմաներէնից լատիներէնի թարգմանութիւնը դժուար էր յաջողում, որովհետեւ լատիներէնը շատ տարբեր է կենդանի մայրենի լեզուից: Երբ նա լատիներէն էր կարդում, ճիշտ համար էր տալիս, թէ բառը որ կարգի է, ինչից է ծագում և թէ ներկայ դէպքում ինչ նշանակութիւն ունի: Իսկ գեղեցիկ լատիներէնի թարգմանութեան համար մի նոր վարժութիւն էր հարկաւոր. այժմ գերմաներէն մտածելիս պէտք է գտնէր լատիներէն համապատասխան ձևը, որ հարկաւ շուտ չը սովորեց: Գասական լատիներէնի վարժութիւնը աւելի համալսարանում ստացաւ Կարլը, ուր որ այդ լեզուով ազատ միջաբանում էր և գիտուններին հիացնում:

Լատիներէն 4 ամիս սովորելուց յետոյ, Կարլը սկսեց անգլիերէն: Այս նպատակով հայրը նորան մի քանի օրերով տանում էր Հայլէ և այդ լեզուի արտասանութեան համար օգուտ էր քաղում հմուտ վարժապետի դասերից: Դասի ժամանակ որդու հետ հայրն էլ սովորում էր, որպէս զի հետեւեալ դասի համար միասին կրկնեն կամ պատրաստուին: Անգլիերէնը այնպէս հեշտ սովորեց մանուկը, որ 3 ամսում առաջ գնաց այնքան, ինչքան որ ուրիշ լեզուների համար գործ էր դրել 6 կամ 9 ամիս:

Աերջապէս կարգը հասաւ յունարէնի, որ ամենից դժուարութիւններ պատճառեց: Նպաստաւոր հանգամանքը այն էր, որ մանուկը կամենում էր սովորել այդ լեզուն ևս: Հայրը արդէն շատ անգամ գովել էր Հոմերին, Քսենոփոնին, Պլուտարքոսին և միւսներին: Որդու խնդրանք

նա երկու երեք ամիս շարունակ  $\frac{1}{4}$  ժամ պարապեց, յետոյ մի մի ժամ, իսկ երբեմն աւելի ևս երկար: Թէպէտ մանուկը մեծ ջանք էր գործ դնում, բայց մի քանի ամսից յետոյ վշտահար սրտով խոստովանում էր, թէ յունարէնը իրան չի յաջողում և Յ ամիս գործ դնելուց յետոյ՝ հազիւ այնքան վաստակեց, որքան որ աւելի կարճ ժամանակում միւս լեզուներ էր սովորում: Բայց երբ որ արդէն յաղթել էր առաջին դժուարութիւնները, ապա սկսեց արագաբայլ առաջ ընթանալ:

Աւելի հաւանական պիտի համարուի, թէ երևի մանուկը ամբողջ օր աշխատութեան սեղանի վերայ է մաշել իւր կեանքը, որ կարողացել է կարճ միջոցում (մօտ 33 ամսում) 5 օտար լեզու ուսանել: Հայրը հաւատացնում է, թէ սխալ է պոզ ենթադրութիւնը: Այս հրաշքը նա բացատրում է ուրիշ հանգամանքներով. աշակերտը հէնց սկզբից ամեն տեսակ իրերի ծանօթութեանց հարուստ պաշար ունէր, նորա հասկացողութիւնը լաւ զարգացած էր, նա սովորել էր ուղիղ և ընտիր գերմաներէն խօսել, նորա սրտում օտար լեզուների սերը զանազան կողմերից սերմանած էր, նա պարզ ըմբռնել էր նոցա օգուտը, նա վարժ էր արագ և արդիւնաւոր կերպով աշխատելու, չէր ծանրաբեռնուում գրաւոր վարժութիւններով: Բացի սորանից այս բոլոր լեզուները աւանդուեցան ոչ թէ միաժամանակ, այլ յաջորդաբար: Հէնց որ մանուկը մի լեզուի գլխաւոր դժուարութիւնները վերացնում էր, այնուհետև  $\frac{1}{4}$  կամ  $\frac{1}{2}$  ժամ էլ գործ էր դնում, որ փոխ առ փոխ առաջ սովորած լեզուներից մէկը կամ միւսը կրկնէ կամ փոքր ինչ շարունակէ: Այս դէպքում կարողում էր մի հատուած և անծանօթի բացատրութիւնը փնտռում էր բառարանի կամ քերականութեան մէջ, որպէս զի անթերի կերպով գերմաներէնի դարձնէ: Միայն վերջացնելուց յետոյ որդին իւր գործը տալիս էր հօրը, որ նա ստուգէ, թէ ի՞նչպէս է կատարուել ինքնաշխատութիւնը: Այսպիսի պարապմանց զուգընթաց զբօսնելիս, ճանապարհորդելիս և ուրիշ դէպքերում ևս հայր ու որդին շատ էին խօսակցում, սկզբում աւելի ֆրանսերէն միայն, իսկ յետոյ նաև իտալերէն, և աւելի ուշ լատիներէն ու անգլիերէն: Հօր հաստատու-

Թեամբ մանուկը մինչև 10 տարեկան հասակը օրական միջին թուով միայն 2 ժամ է դաս առել: Բայց ի հարկէ ձմեռուայ երկար երեկոներին և վատ եղանակին կէսօրից յետոյ կարդացել են գերմաներէն կամ մի ուրիշ լեզուով:

Հայրը անհիմն է համարում և մի ուրիշ տարակոյս, որ շատ անգամ լսում է, թէ զանազան լեզուներ կարող էին խառնուել Վարլի գիտակցութեան մէջ: Այդպիսի շփոթութիւններից, իրա ստելով, որդին զերծ է մնացել, գուցէ այն պատճառով, որ վաղ մանկութիւնից սովորութիւն ունէր, ինչ որ գործէր այն ամենը կատարել ուղիղ և լաւ, և գլխաւոր ջանքը միշտ նուիրել առաւելապէս միայն մի առարկային:

Հօր հաղորդած տեղեկութիւններին նայելով, մանուկը Լոխաուի մէջ գիտութիւններից յատուկ դասեր չի ստացել. բայց և այնպէս ուսումնական ծանօթութեանց մի մեծ պաշար է իւրացրել, առանց միշտ լսելու և իմանալու, թէ այս կտորը պատկանում է պատմութեան, միւսը բնագիտութեան, երրորդը աշխարհագրութեան և այլն: Բնական պատմութեան բոլոր մասերից ծանօթութիւն ստացաւ, հէնց որ փոքր ինչ մտածել սովորեց: Այդպիսի դասերի համար առիթներ էին պարտէզը, անտառն և այլն: Նորա դուարձութիւններից մէկն էր բնական պատմութեանց մի լաւագոյն տպագրութիւնը. իսկ Հալլէի, Լայպցիգի և ուրիշ տեղերում օտար կենդանիներ և բոյսեր տեսնելու հանգամանքից միշտ օգուտ էր քաղում: Մեծ և փոքր ճանապարհորդութիւնների ժամանակ, նա հասկացողութիւն էր ստանում ծովի և նորա բնակիչների, հանքերի և բով.քերի, զարմանալի պրերի, շոգեմեքենայի, օդահանի, լեռների, գետերի և ուրիշ առարկաների մասին: Այլ և տան մէջ ևս բնական առիթներ չէին պակասում Փիդիքայի, քիմիայի, պարտիզպանութեան, երկրագործութեան և ուրիշ կարգի տեղեկութիւններ դիպուածով իմանալու համար:

Աշխարհագրութիւնը հետեւեալ եղանակով աւանդեց հայրը: Հէնց որ հնարաւոր էր լինում՝ նա իւր որդուն տանում էր այն բոլոր գիւղերը, որոնք երևում են Լոխաուի աշտարակից բացուող հորիզոնի վերայ: Պայծառ եղանակին նոքա բարձրանում էին աշտարակի վերայ, հետք

առնելով մի բանի թերթ սպիտակ թուղթ և մատառ նախ նկարում էին թերթի մէջ տեղ Լոխաուի մերձաւոր յատակագիծը, բայց խիստ փոքր չափով, ապա մի առ մի նշանակում էին՝ աչքին երևցող իւրաքանչիւր գիւղի փոխարէն՝ մի մի կէտ, որոնց անունն էլ պահում էին մտքում: Ջաւը, Էլստերը, անտառները, արտերն ու դաշտերը հարեւանցի նշանակում էին: Տուն դառնալիս նկարը ցոյց էին տալիս մօրը, որ բանի մի նկատողութիւններ էր անում և հարցմունքներ էր տալիս: Ուրիշ անգամ կրկին բարձրանում էին աշտարակը, ուղղում և կատարելագործում էին նախկին նկարը: Այսպէս կազմում էր շրջակայքի շատ թէքիչ նման քարտէզ, որ յետոյ Ջաւլ ջրաբաշխի մասնաւոր քարտիզի հետ համեմատելով, ըստ այնմ նորաթերութիւնները ուղղում էին: Այս եղանակով մանուկը սովորեց ծանապարհորդելիս միշտ ճշդիւնկատել վայրերի դիրքը, իսկ ընթերցանութեանց ժամանակ պատահած բաղաբներն ու աշխարհները փնտռել աշխարհացոյց քարտէզի վերայ, որոնցից ամեն տեսակը և բաւական թուով ունէր Յ տարեկան հասակում, իբրև օժանդակ միջոց միւս գրքերի հետ ի միասին: Նա ունէր նմանապէս և հին աշխարհի ատլասներ. և ինչ որ հին ազգերի մասին կարգար, իսկոյն պէտք է այնտեղ գտնէր համապատասխան երկիրներ, աշխարհներ, գետեր, սարեր, բաղաբներ:

Պատմութեան առաջին ծանօթութիւնները ստացուեցան զբօսնելու ծանապարհորդութեանց միջնորդութեամբ կամ պատմական պատկերներ և պղնձագրոշմեր զննելու ժամանակ՝ համապատասխան պատմութիւններ լսելով: Կարլը տիեզերագրութիւնն էլ սովորեց մի իշխանից, որ աստղաբաշխութեան մեծ սիրահար էր և աստեղագիտական ընտիր գործիքների տէր և որին հայր ու որդին շուտ շուտ այցելում էին:

Ահա Յ տարեկան հասակում այսպէս բազմատեսակ ուսուցանական ծանօթութիւններ ունէր նա մեծ քանակութեամբ, բայց որքան պիտի զարմանար, եթէ իրան ասէին, թէ դոքա պատկանում են աշխարհագրութեան, Փիզիքայի, տիեզերագիտութեան կամ մի ուրիշ մակացութեան շրջանին: Այս անուններից հայրը խիստ զգուշանում էր, մասամբ մանուկին գիտնական կուսակութիւններով չը սարսափեցնե-

լու և մասամբ սնափառութիւնից զերծ պահելու համար: Բայց ի հարկէ Վարլը այդ անունները շատ շուտ ըմբռնեց, երբ յետոյ նորան հաղորդեցին, թէ նոքա ինչ են նշանակում:

Իսկ թէ Վ. իտաէ քահանան ինչպէս էր զարգացնում իւր որդու մէջ գեղեցկութեան ճաշակը, թող ինքը պատմէ մեզ. «Ես իմ սենեակում, գաւթում, պարտիզի մէջ, պատմում է նա, որքան կարող էի հալածում էի ամեն բան, ինչ որ անձաշակ էր և միւսներին չէր պատշաճում, անասնելին չէի համբերում, եթէ հակակրութիւն շարժող մի բան պատահէր, ես այդ անունն էլ ապլիս էի և իսկոյն մէշտեղից վերացնում: Իմ բոլոր սենեակները պատած էին միագոյն թղթէ սրահակներով (կապոյտ, դեղին, կանաչ), միայն շրջանակները ակնահաճոյ զարդարանքներ ունէին: Իւրաքանչիւր սենեակում կար քիչ քայքայ ընտիր կարասիք: Բոլոր պատերի վերայ կախ էր առած պատկերներ, բայց նոցանից ոչ մէկը անձաշակ խայտաբղէտ չէր, կամ անհաճոյ առարկայ չէր ներկայացնում: Մեր գաւիթն ու պարտեզը գարունքից սկսած մինչև աշունքի վերջը շարունակ ծաղկում էր, ձնծաղիկն ու քրքումը զարդարանքի սկիզբն էին կազմում, իսկ վերջը գալիս էր ձմեռային աստղածաղիկը, որ կամ ծածկվում էր ձիւնով և կամ սառնաշունչ ցրտատար էր լինում: Մենք ինքներս միշտ հագնում էինք մաքուր և պարզ»:

«Բնաւ սովորութիւն չունէի գնել այնպիսի առարկայ, որ լոկ միայն ճոխութեան նշանակութիւն ունէր. բայց Վարլի համար էլ այնպիսի պատկերազարդ գիրք չէի առնի, եթէ միջի պատկերները չը լինէին հաւատարիմ և գեղեցիկ: Եթէ նորան մի ագեղ պատկեր ընծայ բերէին, մենք սկսում էինք ծաղրել անձաշակութիւնը և կատակներ անել. աւելի անգթութեամբ հալածում էինք գոյների խստութիւնը, իսկ ընդհակառակ շատ անգամ մեծ հաճութեամբ զարմանք էինք յայտնում ծաղիկների, թռչունների և ճճիների նուրբ երփներանգի մասին: Եթէ այդտեղ էլ խիստ խայտաբղէտ գոյներ պատահէին, այն էլ առանց նկատողութեան չէինք թողնում»:

«Մենք ոչինչ չէինք խնայում, որ դրսի աշխարհի գե-

ղեցկութիւններն էլ տեսնենք. Լայպցիգը, Դէսսաուն, Պոսս-  
դամը, Բերլինը, Վայմարը, Դրեզդէնը, սաքսոնեան Զուխ-  
ցերիան և այլն Կարլի գեղեցկութեան գաղափարները ըստ  
ամենայնի ընդարձակում և ճշտում էին: Լայպցիգը և սո-  
նավաճառը յայտնի էին Կարլին արդէն փոքր մանկութիւնից.  
Ե տարեկան էր, որ ճանաչեց Պոսսդամի և Բերլինի գեղեց-  
կութիւնները. Դրեզդէնը և նորա հրաշալի շրջակայքը տե-  
սաւ 6 տարեկան հասակում, այնտեղի պատկերասրահը այ-  
ցելում էինք շաբաթներով ամեն օր, նոյնպէս էլ զանա-  
զան անդրինները, ձուլուածներն ու անթիկներ, որքան որ  
պատեհ ժամանակ էր գտնվում: Եթէ մի գեղեցիկ մարդ,  
ձի, շուն, թռչուն, տուն, կառք, գործիք, պատկեր տես-  
նէինք, միշտ իրար ուշադրութիւն էինք հրաւիրում, ներ-  
հակը մենք նկատում էինք գարշութեամբ, իսկ եթէ մար-  
դու մէջ նկատէինք՝ կարեկցութեամբ:

Փոքր հասակից սկսած Կարլը սովորում, սիրում և ար-  
ժէքի համեմատ գնահատում էր ոտանաւորները: Մենք սկը-  
սեցինք պարզ և հեշտ բանաստեղծութիւնից և հետզհետէ  
բարձրացանք մինչև վեսմագոյնը: Չափը, ոտքը, ոճը, բո-  
վանդակութիւնը, դարձուածքի կամ մասերի յարաբերու-  
թեանց նրբութիւնները—այս ամենը մենք միասին ուսումնա-  
սիրում և քննադատում էինք: Նոցանից գեղեցիկները Կարլը  
շատ շուտ անգիր էր անում, եթէ նորա առաջ մի բանի ան-  
գամ կրկնէինք մեր զբօսանքների ժամանակ: Նա սովորում  
էր ոչ միայն գերմաներէն ոտանաւորներ, այլ և ֆրանսե-  
րէն և միւս լեզուներով և նա անգգալի կերպով շատ սո-  
վորեց, որովհետև նոցա գեղեցկութիւնից գրաւած՝ բազմիցս  
կարգում էր և մտքումը պահում: Չեմ անուանի բոլորը,  
այլ կը յիշեմ մի բանի հեղինակներ, որ նորան յայտնի էին.  
Ֆլորիան, Մետաստազիո, Վիրգիլիոս, Հորաս, Հոմերոս:

Շատերը կարծում էին, թէ Կարլ Վիտտէի չլուած  
գիտութիւնն ու հմտութիւնը լոկ միայն յիշողութեան ար-  
դիւնք է: Արդէն նորան վիճակուած ուսուցման և կրթու-  
թեան եղանակի նկարագրութիւնից պէտք է համոզուինք, որ  
այն կարծիքը անտեղի նախապաշարմունք է. բայց միւս կող-  
մից ո՞ր յիշողութիւնը կը կարողանայ այնքան բան իւրաց-  
նել, ինչ որ նա բազմաթիւ քննութիւններում ապացուցեց

իրև իւր ոգու անկապանի սեպհականութիւն. էլ չենք  
ստուժ, թէ հայրը անկեղծօրէն վկայում է, որ իւր որդին  
անգիր սովորելու գրեթէ բնաւ չէր բռնադատվում: Թէ նորա  
յիշողութիւնը լաւ է եղել, այս ի հարկէ չի հերքուի. բայց  
սխալ է կարծել, իբր թէ նորա յիշողութիւնը գերազանց  
է եղել, քան նորա հասկացողութիւնն ու դատողութիւնը:

## 4.

Վիտաէ քահանան և նորա կինը մեծ կարևորութիւն  
էին տալիս սրտի կրթութեան և հէնց սկզբից աշխատում  
էին միահամուռ կերպով, որ իրանց որդու միտումները  
և հակամիտութիւնները, յօժարութիւններն և խորշումները՝  
արտաքին և ներքին բարոյական օրէնքների համաձայն, մա-  
նաւանդ մաքուր բարեպաշտութեան համաձայն ընթանան,  
հետևապէս նոցանից մի քանիսը պէտք է զսպէին, միւսները  
ամենայն զօրութեամբ բաջալերէին:

Օրորոցից սկսած մանուկը սովորում էր ճանաչել  
Աստծուն, կամ աւելի ևս նորա ամենակարողութիւնը, իմաս-  
տութիւնը և բարութիւնը ամեն բանի մէջ, առաւելապէս  
բնութեան մէջ և պաշտել նորան: Ծնողների խօսակցու-  
թիւնները նորա հետ, մանաւանդ բնութեան առարկաների,  
մարդու վախճանական վիճակի, մանկանց մտքի և հոգու  
լուսաւորութեան մասին, միշտ ազդում էին, թէ այդ ամենի  
մէջ ամենուրեք, ամենիմաստուն, ամենաբարի և արդար, Ա-  
րարչի վերին բազուկն է տարածվում: Այն հաւատքը, թէ  
Աստուած միշտ տեսնում է Յարլին և նորա արարքները,  
ախպէս տպաւորուել էին մանուկի սրտում, որ ուր էլ լի-  
նէր, ինչ էլ անէր, նա իրան չէր համարում մէնակ և ան-  
տեսանելի: Հարկաւ երբեմն մանկական թեթևամտութեամբ  
այս բանը մոռանում էր և սխալանք էր գործում, բայց  
հէնց որ յիշեցնէին, նա իսկոյն զգաստանում էր:

Ծնողները իրանց խղճի խնդիր էին դարձրել, որ միշտ ար-  
դար և արժանագործ, խիստ և սիրագորով լինին իրանց որ-  
դու հետ: Եթէ նոցանից մէկը աչալրջութեան պակասու-  
թեան պատճառով մի բան չը տեսնէր, զանցառութեան տար

և հեշտութեամբ ներեր, միւսը այս բանն այնպիսի խոշոր սխալ էր համարում, ինչքան և անտեղի խստութիւնը, որովհետեւ երկուսն էլ հաւասար չափով մնաս են բերում:

Կարլը ազատութիւն էր վայելում գործել, ինչ որ հակառակ չէ բնութեան, ինչ որ անարդարութիւն չէ, ինչ որ բարի է: Մինչև անգամ չէին արգելում անտեղութիւններ, թէպէտ և միշտ յարակցում էին, թէ այս կամ այն պատճառով արարքը իրան չի վայելի: Իսկ այս սահմաններից դուրս նորա ցանկութիւնները իսպառ կը մերժուէին, այն ևս առանց որևէ պատճառաբանութեան, եթէ պատճառը ինքը կարող էր իմանալ, կամ բանական և հասկանալի պատճառներ լսելով, եթէ դեռ ևս անգէտ էր: Պատահում էր, որ մանուկը երբեմն մոռացութեան էր մատնում իրան յայտնի պատճառը, այս դէպքում իսկոյն հարցնում էին մոռացածները:

Արդէն կեանքի առաջին տարիքում նորան կ'ասէին մի մերժողական Ոչ, բարձր և լուրջ ձայնով, եթէ նա այնպիսի բան պահանջէր, որ արգելած էր եղել, բայց իսկոյն կ'աշխատէին նորա ուշադրութիւնը մի ուրիշ կողմ դարձնել: Կարճ ժամանակից յետոյ էլ հարկաւոր չէր լինում նորա ուշքը ուրիշ մտքերով գրաւել, որովհետև նա փորձուեցաւ, թէ մի անգամ Այո կամ Ոչ ասածը՝ անդրդուելի է մնում, մինչև անգամ ոչ լաց և ոչ ծիծալ չի օգնում: Նա ուրեմն շատ շուտ սովորեց տեղնուտեղը հնազանդիլ, որ խիստ կարևոր հանգամանք է մանուկի կրթութեան և ապագայ կենաց համար:

Աւելորդ չէ այստեղ յիշատակել մի քանի դէպքեր ծընողների խօսքերով, որով Կարլ Ախտտէի բարսյական կըրթութեան յատուկ եղանակը իսկութեամբ կը տեսնենք:

Առաջին երկու մինչև երեք տարիքում, այսպէս է պատմում հայրը, բնութիւնը աւելի մօր համար էր սէր ձգել նորա սրտում, քան թէ ինձ համար: Օրուայ մեծ մասը ես գտնուում էի իմ առանձնասենեակում, պաշտօնիս մէջ, կամ անից դուրս: Իսկ երբ որ նորա մօտ էի լինում, ես պահանջում էի աւելի լրջութեամբ՝ մինչև անգամ խստութեամբ:

կարգ, մաքրութիւն, հնազանդութիւն և այլն, հետևապէս անթերի կատարել էի տալիս այն ամենը, ինչ որ մայրը՝ որպէս կին արարած՝ կամ չէր կարողանում, կամ մայրական սիրով, թերևս թեթև սրտով, զանցառութեան էր տալիս։

Սակայն փոքր մարդը այս բաները չէր ըմբռնում, այս բոլորի մէջ ոչ արդարութիւն, ոչ խնամք և ոչ պատշաճ էր պեսնում։ Նա ուրեմն մօրն աւելի էր սիրում, քան ինձ։ Ես այդ բանը վաղուց նշմարել էի, բայց չէի արտնջում, որովհետև բնական էի համարում։ Մի օր երեքս նստած էինք բազմոցի վերայ և Կարլը ամենամեծ քնքշութեամբ խաղում էր կնոջ հետ։ Կինս ժամանակ առ ժամանակ նորան նշան էր տալիս իմ կողմը — անշուշտ բարի մտքով և մանուկը մի մի անգամ ինձ էլ էր համբուրում, բայց իսկոյն դարձեալ դէպի մայրն էր քաշվում։ Վերջապէս կինս նորան իմ կողմը շրջեց և ակնջում ասաց, թէ հօր համար պէտք է աւելի սիրտ ունենալ։ Անմիջապէս լուրջ դէմքով դարձայ նորան և ասացի, «Ի սէր Աստուծոյ, թող, որ դա սիրագուրէ որին և ինչպէս ուզենայ, լաւը հէնց այդ է։ Այժմ քեզ աւելի է սիրում, քան ինձ և պղպէս էլ պէտք է անէ, եթէ չի ուզում, որ նեղանամ իր վերայ։ Իսկ իւր սէրը հարկաւ չը պէտք է ծածկէ, եթէ չի ուզում կեղծաւոր լինել։ Բայց կը գայ ժամանակ, երբ ես աւելի օգտակար կը լինիմ դորան, քան դու։ Այն ժամանակ եթէ ինձ աւելի չը սիրէ, գոնէ անշուշտ աւելի կը յարգէ։» Կինս հասկացաւ խօսքերիս զօրութիւնը։ Ուստի և նորան ազատ թողեց իւր կամքին։ Գուշակած ժամանակն իրօք հասաւ։

Եթէ Կարլը հասարակութեան մէջ յայտնէր ուղիղ դատողութիւն, բայց կոշտ ձևով, իւր խօսածին չէի հակառակում, այլ ներկայ հիւրերին դառնալով ասում էի կիսակատակ. «Սա, ինչպէս տեսնում եք, գիւղացի է, խնդրեմ, ներողամիտ եղէք սորա խօսքերին»։ Այսպիսի դէպքերից վերջապէս Կարլը ըմբռնեց, թէ երբեմն այնպիսի բան է ասում, որ թէպէտ և ուղիղ է, բայց վայել չէ և հէնց որ մենք մէնակ մնայինք, անպատճառ կը հարցնէր, «Ինչու անվայել է»։ Եւ որովհետև նա յօժար կամքով իմանալ էր ուզում, ևս էլ ի հարկէ թեր և դէմը, ուղիղը և կոշտը բացատրում

էի, որով հետզհետէ նորան ընտելացնում էի նուրբ բարբերին, բայց առանց նորա հասկացողութիւնը նեղ սահմանի մէջ ճնշելու և առանց ֆեասելու նորա սրտի ինքնաբեր յայտնութեանց, մի առ ժամանակ կոշտութեամբ միտք յայտնելը աւելի բարուք համարելով, քան ճշմարտութիւնը լռեցնել տալով: Ես չէի արդելում Խօսքի ազատութիւնը, Թողնելով, որ ժամանակը սովորեցնէ պարտ ու պատշաճը:

Գրեթէ 3 տարեկան էր, երբ մի օր մեծ բազմութիւն էր հաւաքուել մեր տանը: Ամենքը նորան գգւում, երես էին տայիս, նա էլ շատ ուրախ էր և համարձակ: Յանկարծ նորա առաջ անցաւ մեր շունը. նա հանաքով բռնեց նորա պոչը և քաշեց իւր կողմը, անփոյթ լինելով, որ ցաւ է պատճառում: Նոյն վայրկենին ես էլ բռնեցի իր երկար մազերը և այնպէս քաշեցի նորան իմ կողմ, ինչպէս որ նա շանն էր քաշում դէպի ինքը: Խօսք չկայ, որ իսկոյն հասկացաւ, թէ ես հանաք չեմ անում, նայեց ինձ և իմ սպանական դէմքը տեսնելով՝ կարմրեց և թող տուեց շանը: Այնուհետև ես էլ թողեցի և դիտմամբ բոլորի առաջ հարցրի, «Ինչ է, համո՞ղ է, որ ես էլ քո մազն եմ քաշում»: — Զէ, ասաց ամաչած: «Ի՞նչ, իմացիր, որ շունն էլ չի հաւանում քո արածը: Կիմա գնա գաւիթը»:

Չորս և կէս տարեկան կը լինէր Կարլը, պատմում է մայրը, երբ մի օր մտայ մեր սենեակը, ուր կրակատեղի մի անկիւնում տապակած սագի միս էր տաքանում հօր գալստեան համար: Այդ ժամանակ Կարլը այդ տեղ մենակ էր և փոխանակ ուրախ սրտով ինձ դիմաւորելու, ինչպէս որ սովորութիւն ունէր, շուարած դարձրեց երեսը ինձանից և պատուհանի կողմը գնաց, ձեռքներով իբր թէ բան է ուզում տեսնել: Աեղծութիւնը յայտնի երևում էր, ուստի շտապով մօտեցայ նորան, ուղիղ երեսին նայեցի և ստոյգ տեսայ, որ ամօթից կարմրել է: «Ի՞նչ ես արել, Կարլ», հարցրի լուրջ կերպով: Նա կակաղելով պատասխանեց: «Ոչինչ»: Նորա աչքերից ստութիւնը փայլում էր, և ասա

ցի առանց տատանելու. «Կարլ, դու խաբու՞մ ես մօրդ. իսկոյն խոստովանիր ճշմարտութիւնը, ապա թէ ոչ Աստուած լաւ գիտէ, թէ դու ինչ ես արել, և իմ անդը վրէժխնդիր կը լինի, եթէ ուղիղը չասես»: Արտասուալից վազեց գիրկս ընկաւ և խոր խոցուած հեկեկաց. «Սիրելի մայրիկ, ես մի չարութիւն եմ գործել, սագի միս եմ գողացել: Ներիր, ուրիշ անգամ էլ չեմ անի»:

Հաս արամեցի և լցուած աչքերով պատասխանեցի. «Ո՛հ, որդիս, որքան վշտացնում ես ինձ. դու երկու մեծ մեղք ես գործում, գողանում ես և սուտ խօսում: Ինչպէս կարողացար մոռանալ, որ քո արարքով ցաւ ես պատճառում երկնային Հօրը և մեզ ծնողներին: Եթէ ուրիշ անգամ էլ կրկնես, դու մի չարագործ կը դառնաս, իսկ ես կը լինիմ ամենամաքախտ մի մայր»:

Ապա նստեցի պատուհանի մօտ, գլուխս դրի ձեռքի վերայ և տեսաւ իմ լացը: Նա աղիողորմ հազար անգամ համբուրեց միւս ձեռքս և ներողութիւն խնդրեց:

«Ա՛հ, սիրելիս, վերջապէս խօսեցի, եթէ քեզ ներեմ, ինչ օգուտ, դու շուտ կը մոռանաս և վատութիւնդ կը կրկնես: Ես պէտք է պատժեմ քեզ, որ երկար յիշես, թէ ինչ մեծ անիրաւութիւն ես գործել: Իմ արտմութիւնը շուտ կը ջնջուի մաքիցդ, նոյնպէս և խոստումդ, իսկ պատժի ցաւը երկար չես մոռանայ»:

Նա նորից խնդրեց, որ այս վերջին անգամ թողութիւն տամ: Ես նստեցրի նորան իմ գոգը, համբուրեցի և բաղդրութեամբ ասացի. «Ուրախ եմ, որդիս, որ ինքդ զգում ես քո չարութիւնը, ուստի այսուհետև դարձեալ կը սիրեմ քեզ. ես այս խոստումը տալիս եմ, թէպէտ դու իմ սիրաւը խոցեցիր: Իսկ թէ արդեօք պէտք է քեզ պատժեմ, թէ զիջանեմ, այս բանը ինքդ վճուիր, երբ աւարտեմ մի պատմութիւն, որ հիմա ուղում եմ քեզ հասկացնել: Լսիր ուշադրութեամբ»:

Մայրը սկսեց պատմել մի մանուկ Մորիցի կարճ կենսագրութիւնը, որ թէպէտ հարուստ ծնողի զաւակ էր, բայց ոկրամոլութեան պատճառով՝ աչքածակ, խաբեբայ և յափշտակող դարձաւ, իսկ մօր անանդի զիջողամտութիւններից՝ նորա չարութիւնը գնալով այնքան մեծացաւ, մինչև

որ կատարեալ գող և աւագակ մեծացաւ և կախաղան բարձրացաւ:

«Տես, սիրելի Կարլ, դու էլ գուցէ այս ճանապարհով գնաս: Հիմա ասա ինձ քո արդար սրտով, ես ի՞նչ պէտք է անեմ, եթէ քո բարին ցանկացող և ապագայիդ համար հոգացող մայր լինիմ?»

«Դու ինձ պէտք է պատժես», պատասխանեց Կարլը իսկոյն: «Մինչև անգամ եթէ և ներեմք քեզ:—«Այո՛, անշուշտ պէտք է պատժես. ապա թէ ոչ, ես էլ մի Մորից կարող եմ դառնալ»:

Այսպէս նա իւր պատիժը (ծեծը) ստացաւ առանց տրտնջալու և իմ գրկում սփոփեց իւր ցաւը (!!!) <sup>1)</sup>:

Կարլը այնպէս էր առաջնորդուած, պատմում է հայրը որ ոչ ինքն իրան էր ներում՝ անիրաւութիւն գործել և ոչ թողնում էր որ ուրիշները իրան մոլորեցնեն: Նոյն իսկ եթէ մենք բացակայ լինէինք ոչ մի արգելած բան չէր անի: Ինչ որ հիմա կը պատմեմ, նոյն օրինակ բաներ շատ է պատահել:

Մենք երկուսս գնացել էինք մի գիւղ բարեկամի այցելութեան: Միւս առաւօտ սուրճ խմելու ժամանակ Կարլը անզգուշութեամբ իւր կաթը քիչ թափեց սեղանի վերայ: Բայց մենք ունէինք մի օրէնք սահմանած, որ ի պատիժ իւր

1) Մենք պէտք է հաւատարմութեամբ նկարագրէինք կրթութեան եղանակը, ինչպէս որ իրականութեան մէջ կատարուել է, թողնելով որ ինքը ընթերցողը եզրակացութիւններ հանէ, թէ արդեօք միշտ իմաստութիւն կայ այդ եղանակի մէջ: Բայց յառաջագոյն մի նկատողութիւն անել անելորդ չէ: Մինչև որ մայրը թատրոնական կեղծ ծեսեր չէր բանեցրել, լաւ էր խորտում որդուն: Բայց յետոյ սկսում է սարսափեցնել, անտանելի չափազանցութեամբ սարսափեցնել, անմեղ սրտի մէջ գայթակեցուցիչ մտքեր սերմանել, ապա վերջացնում է անգութ եւ անարդար խտրութեամբ: Մա չէ բարոյական շինութիւնը. այստեղ մի ծեղրով շինածը, միտով քանդում է: Մենք շուտով կը տեսնենք, որ հայրը անելի լաւ էր հասկանում քառօրյակ և ն պատիժների զօրութիւնը, եւ մարմնական պատիժ այնքան չէր գործածում, ինչքան մայրը:

Ժան. Թարգ.

անդգուշութեան էլ ոչինչ չը պէտք է խմէ և ուտէ բացի աղ ու հացից:

Նա շատ սիրում էր կաթ: Մեր բարեկամները կաթի մէջ խառնել էին շատ շաքար և նորա առաջ մի կտոր համադամ կարկանդակ և ս դրել, որովհետև նորան շատ էին սիրել: Սակայն Կարլը յանկարծ կարմրեց, ամաչեց և դագարեցրեց նախաճաշիկը: Ես հասկացայ պատճառը, բայց այնպէս էի անու՛մ, իբր թէ ոչինչ չեմ նկատում:

Բարեկամներս չիմանալով բանի զօրութիւնը, սկսեցին սիրտ տալ մանուկին, որ շարունակէ խմել: Նա հրաժարուում էր և վերջը խոստովանեց, թէ իրաւունք չունի խմել, որովհետև անդգոյշ գտնուեցաւ և սեղանը աղտոտ՝ Հայրկաւ նոքա հաւատացրին, թէ փնաս չէ, և ուրեմն հանգիստ կարող է շարունակել նախաճաշը: Ես լուցի և դիտմամբ սկսեցի ճանապարհի պիտոյքները պատրաստել. իսկ Կարլը չորս կողմի յորդորներից և աղերսներից յամառութեամբ անշարժ մնաց, այնպէս որ բարեկամներս ի սէր մանկան չարացան ինձ վերայ, կարծելով, թէ ես մի նշանով արգելք եմ դրել որդուս:

Ես Կարլին ուղարկեցի դաւիթը և բոլոր մանրամասնութիւնները բացատրեցի նոցա: Բայց ի զուր, որովհետև նոքա պնդում էին, թէ բնութեան հակառակ է, որ մի առողջ մանուկ իւր սիրած կաթն ու քաղցրաւենիքը չը վայելէ միայն այն պատճառով, որ մի աննշան զանցառութեան համար ինչ որ արգելական օրէնք է եղել:

«Մի առ ժամանակ այս տեղից հեռացէք». վերջապէս ասացին ինձ, ճապատեսէք, թէ նա ինչպէս կը խմէ կաթը՝ «Բարի», պատասխանեցի ես, ճես կերթամ, որպէսզի համոզուիք, թէ նորա արարքը իւր սրտի թելադրութիւնից է բղխում և ոչ թէ ես եմ բռնադատում, միայն յետոյ ինձ պատմեցէք ճշմարտութեամբ, ինչ որ կատարուի: Ես էլ խոստանում եմ, թէ բնաւ չեմ յանդիմանի նորան, եթէ իմ բացակայութեան ժամանակ կաթը խմէ»:

Կարլին կաշեցին, իսկ ես մի պատճառանքով սենեակից հեռացայ: Բարեկամներս ամեն ճիգ թափել էին, որ նորա յամառութիւնը կտորեն: Նոքա խոստացել էին դաւաթը առաջուսյ չափով լցնել, որպէս զի ես չը նկատեմ,

Թէ նա բան է կերել, և ուրիշ կտոր կարկանդակ առաջարկեցին, այն սոփեստական պատճառաբանութեամբ, թէ իսկապէս օրէնքը այս կտորի վերայ արգելք դնել չի կարող: Մանաւանդ հասկացնել էին ուզում, թէ ես ոչինչ չը գիտեմ և չեմ էլ իմանայ: Իսկ Կարլը միշտ անդրդուելի էր մնացել և կրկնել. «Եթէ հայրս չիմանայ, Աստուած տեսնում է. իմ արածը խաբեւայութիւն կը լինի, եթէ ուրիշ կաթ և ուրիշ կարկանդակ ուտեմ»:

Վերջապէս տեսնելով, որ ապարդիւն է իրանց ջանքը, նորա կոչեցին ինձ և սրտաշարժութեամբ պատմեցին և զելութիւնը: Ես սառնութեամբ լսեցի, որքան որ հնար ունէի, համբուրեցի որդուս և ասացի. «Սիրելի Կարլ, դու յօժար կամօք ինքդ քո վերայ պատիժ դրեցիր և ազնուութեամբ դիմացար գայթակղութեան. ես կը ցանկայի, որ մեր ոտով ճանապարհորդութեան պատճառով փոքր ինչ կազդուրուէիր և մեր բարեկամների խնդիրը անտես չը թողնես, հերիք համարելով, որքան որ պատիժ կրեցիր: Կեր և արբ հանգիստ, դու արդէն կատարեցիր օրէնքը, ես ազատում եմ քեզ շարունակութիւնից: Ապա թէ սկսեց Կարլը շնորհապարտ և ուրախ սրտով ուտել, ինչ որ իւր առաջ մեծարելով դրեցին:

Ինչ որ արտաքին հրահանգութեան է վերաբերում, այսինքն հնազանդութիւն սովորեցնելուն, հայրը որդու հետ վարւում էր սիրալիր լըջութեամբ, այլ և խստութեամբ, եթէ հարկաւոր լինէր, սակայն ոչ երբէք անգթութեամբ: Շատ նուազ դէպքերում հարկաւոր էր լինում պատիժ, աւելի ևս քիչ՝ մարմնական խրատ: Գործ էր դրւում նմանապէս վարձատրութեան միջոցը: Բարոյապէս լաւ վարմունքի համար նա երբէք չէր ստանայ դրամ կամ դրամական արժէք ունեցող մի բան: Այսպիսի դէպքերում նորա միակ վարձատրութիւնը այն էր լինում, որ անձամբ մաքուր գոհունակութիւն էր զգում, թէ կարողացել է մի բարի գործ յաջողեցնել: Եւ այս իւր ուրախ արամադրութիւնը աճում էր այն հանգամանքով, որ նոր կատարուած գործը համա-

նօտակի նշանակում էր իւր քարոյական յուշատետրի մէջ, որ մի սրբութիւն էր համարում և ուր որ այսպիսի դատողութիւններ էր գրում, թէ իւր ծնողներն ու բարեկամները իրան աւելի կը սիրեն, թէ հաստատ համոզուած է, որ Աստուծո կամքն է կատարում և ուրեմն նորանից զօրութիւն է ստանում մի բայլ ևս առաջ գնալու բարութեան մէջ, թէ իւր բարի գործքերը բարի հետեանքներ կունենան:

Բարոյական պատուէրների անկատար թողնելը՝ ծնողները սովոր էին խիստ ծանր բառերով և տրամացած կըշտամբել, իսկ մարդկանց ցաւ պատճառելու մասին և ուրիշ առ հասարակ ցած վարմունքի և դոցա հեղինակների մասին՝ նորա խօսում էին խորին արհամարհանք:

Սակայն աշխատելու համար ջանասիրութիւնը կամ ուսման մէջ նորա ցոյց տալիք եռանդն ու արդիւնքը՝ այլ եղանակով էին հրահանգում ծնողները: Այսպիսի դէպքերում մանուկին դրամով վարձատրելը բնաւ վտանգաւոր չէին համարում: Թէպէտ այս մասումն էլ նորան հասկացնում էին, թէ այն աշխատութիւնները իւր օգտի համար են, իւր մոռը սրելու համար են, բայց և այնպէս խօսքի մէջ և ամեն յարմար առթով մարդու խելքն ու մոռը ստոր էին դասում քան սիրտը և մանաւանդ բարեպաշտական ոգին մարդու մէջ: Եթէ նա անխոնջ աշխատէր, կը լսէր միայն մի ցամաք բացականչութիւն. «Ապրիս, դու կատարեցիր պարտքդ. ես գոհ եմ բեզանից»: Եւ իրողութիւնը նման խօսքերով կը հաղորդուէր մօրը կամ բարեկամներից մէկին: Իսկ եթէ վարմունքի մէջ քարոյութիւն կամ վստմութիւն յայտնէր, այն ժամանակ հայրը ցնծութեամբ և ոգևորութեամբ գործը կը նկարագրէր մօր և բարեկամների առաջ, որպէս մի սրբութիւն: Մի խօսքով ծնողները նորա մօքի մէջ տպաւորում էին այն միտքը, թէ ջանք ու աշխատութիւնը աւելի երկրաւոր կենաց համար է, իսկ ազնիւ գործը երկնային:

Բայց որպէս զի վաղօրօք ճաշակէ, թէ ժրջանութիւնը կեանքի մէջ շահաբեր է, երբեմն ստանում էր դրամական փոքր վարձատրութիւն աւելի այն խորհրդով, որ որչափ հնար է վարձատրութիւնը քաղաքական կեանքին

նմանէ: Այսինքն մինչև որ նորա աշխատութիւնները չնչին էին, նորա արիւտուն էլ գրեթէ ոչինչ էր: Բացի սորանից նա լաւ գիտէր, թէ իւր սաացած սակաւին էլ ոչ թէ իսկապէս արժանացել է, այլ դորանով մի նիւթական նշան է ստանում թէ իւր գործ դրած ջանքերը գովելի են: Մի և նոյն ժամանակ այդպիսի վարձատրութիւններ քիչ էին տալիս, որպէս զի նոցա գինը չը կարուի:

Իսկ այն փոքր գումարները, որ նա պֆէնիգներին՝ ապա կէս և ամբողջ գրողներից էր հաւաքում, փուշ կերպով չէր ծախսում, ապագայի համար էր պահում: Նա սովորում էր անտեսել և բարեգործութիւն անել: Եթէ բազմաբաւենիքի համար գործ դներ, գումարը շատ շուտ կը ցնդուէր, մանաւանդ որ նա այնպէս էր կրթուած և դաստիարակուած, որ այդ բանից բաւականութիւն չէր ստանայ: Ընդհակառակ նա աշխատում էր իւր փոքր խնայողութիւններով օգտակաւ իրեր գնել: Ծնողները այդ պատճառով նորան գովում էին, իսկ նա վերջապէս իւր իրերը ընծայում էր մի ուրիշ մանուկին, որով նորանից շնորհակալութիւն էր ստանում և նորա ծնողներին սիրելի դառնում: Եթէ մի կարօտութիւն կամ դժբախտութիւն լսուէր և օգնութիւն հասցնելու հարկ լինէր, նորա փոքրիկ նըպաստն էլ ընդունւում էր շնորհակալութեամբ:

Բայց եթէ ամենամեծ ջանքով աշխատած լինէր և միւսնոյն ժամանակ բարձր բարոյականի դէմ մի բան գործած, դրամական վարձատրութիւն չէր ստանում: Յանցանքի փոքրութեան ժամանակ հայրը ասում էր. «Եթէ վաղը այդպէս շահասէր, բայց աւելի խելօք և բարի լինիս, այսօրուայ վարձդ էլ կստանաս»: Սովորաբար նա ինքն էր իւր անձի դատաւորը: Արժանի պատժի դէմ չէր բողոքում, այլ ցաւում էր, որ սխալ է գործել և ծնողներին վիշտ պատճառել: Շատ անգամ ինքն էր իւր դատաւիճիւրը կարդում. «Այսօր ոչինչ չպէտք է ստանամ, որովհետև չեմ արժանացել»:

Հէնց որ մի մեծ գործ վերջացնէին, օր. մի գիրք գրել-խէրգլուխ կարդային կամ թարգմանէին, հայրն և ինքը ցընծութեամբ կգոչէին երեք անգամ. «Կեցցէ Շիլլերը կամ Գէթթէն»: Սա մի նշան էր մօրը, թէ այսօր մի ասն ունին կատարելու: Տօնախմբութիւնը կայանում էր նորանում, որ

փոքր աշակերտի սիրած մի կերակուր պատրաստուում էր ընթրիքի համար, սեղանը դարդարուում էր հանդիսով, վառուում էր մի երկրորդ ճրագ, բայց առաւելապէս որ ամենքը ուրախ խօսում էին նորա ժրուածեան, յարատեւութեան, յառաջագիմութեան, հոգեկան զօրութեանց աճման, վերջացրած կամ նոր սկսուելիք գրքի բովանդակութեան մասին և այսպէս բաղցր համեմուում էր պարզ ընթրիքը: Ընթրիքին մայրը կամ պատահական հիւրերից մէկը սեղանի մեծից խնդրում էին, որ աւարած գրքից բաներ պատմէ, որ նա կատարում էր մեծ սիրով: Չէին մոռանում գոհութիւն տալ երկնային Հօրը, որ ոյժ և առողջութիւն է շնորհել վերջացրած աշխատութեան համար: Մայրը յիշեցնում էր որդուն, թէ նա նոյնպէս պարտաւոր է և իւր մարմնաւոր հօրը:

## 5.

Հազիւ 10 տարեկան ուսանող Կարլ Վիտտէն խիստ սիրով ընդունուեցաւ Գեօտտինգէնի ամեն շրջաններում: Ուսուցչապետները ամեն կերպ աշխատում էին նորան օգնել, իսկ ուսանողները ընդհանրապէս լաւ էին վարուում նորահետ: Սակայն ոչ ոք ազատ չէ թշնամանքից և ծաղրից, եթէ զգալի կերպով բարձրացել է հասարակ մակերևութից: Մանուկ Վիտտէն փորձով ճաշակեց այս Գեօտտինգէնի ուսանողներից ոմանք նորան կոչում էին «հրաշքի լակոտ»:

Գալով նորա ուսումնական կրթութեան, ինչ որ Լքսաուի մէջ սկսուել էր, նոյնն էլ ի հարկէ Գեօտտինգէնի մէջ շարունակուեցաւ: Գասախօսութիւններից նա լսեց 18<sup>10</sup>/<sub>11</sub> ձմեռուայ կիսամեակին միայն երկուսը, այն է հին պատմութիւն և ֆիզիքաւ: Հայրը միշտ նորան ուղեկցում էր դասախօսութիւններին, թէպէտ ուսուցչապետները հաւատացնում էին, թէ այդ բանի հարկաւորութիւն չկայ, որովհետեւ Կարլը իրան լաւ է պահում, ուշագիր է, կարևորը խելամուտութեամբ է ըմբռնում և այլն: Այսպէս էլ հայրը նորա հետ պատրաստում էր ուսուցչապետների հետեւեալ դասերը և կրկնում լսածները: Միայն ուսանողութեան վերջին տարիներում Կարլը հետզհետէ սովորեց մէնակ աշխատել:

Հասկանալի է, որ այժմ նորա մտաւոր աշխատութիւ-

նը աւելի պէտք է սուէր, քան Լոխաուի մէջ, այն է օրական 5—6 ժամ. բայց այս հանգամանքը նորա առողջութեան չէր փնասոււմ, որովհետեւ որքան որ աշխատութիւնն ու եղանակը ներոււմ էին, ամեն օր նա գնում էր բացօդեայ զբօսներու: Այսպէս էր օգտոււմ նաև երկար արձակուողներին: Հէնց առաջին զատկական տօնին գնաց ճանապարհորդելու, պատեց Գեօտտինգէնի շրջակայքը, ամենը շատերի մօտ յանձնարարականներ, որպէս զի նոցա օգնութեամբ իւր գիտութիւնն ու փորձը աւելի ընդարձակէ: Այդպէս էլ եղաւ. ուր գնում էր, կալուածատէրը նորա ուշադրութիւնը դարձնում էր երկրագործութեան վերայ, անտառապետը անտառի վերայ, հանքագործը մետաղների պատրաստութեան և օգտաւէտութեան վերայ, արուեսագէտը իւր գիւտերի ու կատարելագործութեան վերայ, ուսումնականը իւր գիտութեան վերայ: Միւսնոյն ժամանակ ի մօտոյ ծանօթանում էր ամեն վիճակի մարդու անային կեանքի հետ և ամենի հետ վարուելու ընտելանում էր:

Երկրորդ կիսամեկին լսեց բուսաբանութիւն և մաթեմատիկա: Բոյսեր հաւաքելը, որոշելը և չորացնելը պատճառեց շատ շարժում և ուրախութիւն: Ամառը Գեօտտինգէն եկաւ Հերոնիմոս Թագաւորը, ուր նա բուսաբանական պարտէզ ևս այցելեց: Միւս բուսաբանների հետ այստեղ էր և ուսանող Վիտտէն: Թագաւորը հետաքրքրուեցաւ նորանով և հաճեց խօսել նորա և հօր հետ. խիստ քաջալերեց նորան և խոստացաւ շարունակել իւր շնորհները: Թագաւորի շրջապատողների համար այսպիսի ընդունելութիւնը մինչև էր, որ իրանք էլ խրախուսեն փոքր ուսումնականին: Երկու զօրապետներ նորան իրանց մէջ առնելով, կարծես թէ յաղթական ճամբ էին կազմել, մինչև որ Թագաւորը հասաւ կառքին:

Այնուհետև 5 կիսամեակում լսեց գործնական մաթեմատիկա, ընական պատմութիւն, դիմախօսութիւն, քիմիա, քիմիական վերլուծութիւն, անկիւնաչափ գործիքներ, քիմիայի շարունակութիւն, հանքաբանութիւն, տարբերական և ամբողջական հաշիւ, գործնական երկրաչափութիւն, լոյսի և գոյնի տեսութիւն, Ֆրանսիական գրականութիւն, հանքաբանութեան շարունակութիւն, պատմութիւն պետութեանց և հին պատմութեան կրկնութիւն: Այս միջոցներում մի մա-

Թեմատիկական շարագրութիւն գրեց, որի հռչակը Թագաւորին հասաւ. սա առաջարկեց հօրը, որ որդին Թնդանօթաձիգ գնդի մէջ մտնի, բայց հայրը չը կարողացաւ հաշտուիլ այդ գաղափարի հետ:

Ուսանող Վիտաէն բացի յիշատակած ուսումնասիրութիւններից շարունակում էր նաև հին և նոր լեզուագիտութիւնը թէ հօր հետ և թէ լեզուաբանական սեմինարներում: 1818 ին մի ուսուցչապետից ստացաւ հեռաւեալ վկայական. Պարոն Կարլ Վիտաէն լսեց իմ դասախօսութիւնները Տակիտոսի պատմութեան մասին: Նա երևելի էր իւր խելացի և յարատև ջանասիրութեամբ, մանաւանդ զարմանալի մտադրութեամբ: Հնախօսական առարկաների մասին՝ առաւելագէտ լատինական լեզուով՝ զրուցարութեանց և հետազոտութեանց մէջ արդէն յաճախակի փորձուած նորա նրբամտութիւնը՝ գեղեցիկ կերպով ապացուցուեցաւ մեր ուսումնական վիճաբանութեանց ժամանակ: Այա ուրեմն ես ոչ միայն կարող եմ վկայել փորձով, թէ նորա հանգիստ խորհող իմացականութիւնը, պայծառ հայեցուածը նրբութեամբ ըմբռնում է առարկան և կարճ մտածութիւնից յետոյ դատում է ուղիղ, այլ և թէ նորա հիմնաւոր, փորձուած ուսումնականութիւնը հաստատուած է անխախտա իմացականութեան և խելամտութեան վերայ, որով նա մեր ուսումնականների կաճառում լուսապայծառ տեղի է արժանանում: Այս վկայութիւնը պարտաւոր էի աւել սուրբ ճշմարտութեամբ, որ և վստահութեամբ կատարում եմ մանաւանդ այն պատճառով, որ դա մի հետևանք է երկար հաղորդակցութեան և ստոյգ ծանօթութեան:

Բացի ուսումնական զբաղմանց Կարլը պարապում էր նաև երաժշտութեամբ, նկարչութեամբ, մեքենական աշխատութիւններով, պարով և մասնաւոր դասեր աւելով:

Յայտնի է, որ Լայպցիգի մարտից յետոյ Աեստֆալեան Թագաւորութիւնը լուծուեցաւ. այս պատճառով դժուարութիւններ առաջ եկան Հերոնիմոս Թագաւորին նշանակած Թոշակի շարունակութեան մասին: Բայց և այնպէս ժառանգող պետութիւնները՝ Հաննովերը, Կուրհեսսէնը, Բրաունշուայգը՝ յօժարութիւն յայտնեցին, իւրաբանչիւրը իւր մասով, շարունակել նպաստել: Այս գործը կարգի բերելու հա-

մար հայր ու որդին ստիպուեցան երթալ նոյն պետութեանց մայրաքաղաքները. Բրաունշուայքի դքսի և Կասսէլի պալատում նոքա ընդունուեցան որոմածաբար: Իսկ Հաննովերի մէջ, նախ քան դրամը վճարելը, կամեցան ստուգել Կարլի գիտութիւնները, որ այն ժամանակ 13 տարեկան էր: Նորան առաջարկեցին, որ գիմնադիոնի աշակերտներին դաս տայ, մաթեմատիկայի զանազան բաժիններից վեց նիւթ ստանալով: 1814-ի մայիսի 3-ին նա դաս խօսեց գիմնադիոնի մեծ դահլիճում: Քաղաքի առաջին ուսումնականները ներկայ էին: Նոքա գիտէին, որ նա նիւթերը ստացել է միայն օր առաջ, այն ևս նա հիւր է եղել Վասարակութեան մէջ մինչև կէս գիշեր: Նա դասը խօսեց առանց գրքի արձակ, եբր յանպատրաստից, բայց այնպէս դիւրութեամբ, կապով և ընտիր գերմաներէնով, որ լսողներից ոմանք անցան ամբիոնի յետևի կողմը, որովհետև նոքա անհնարին էին համարում, որ նա այդպէս խօսել կարողանար, առանց գրուածքը առջև ունենալու: Բայց սխալուեցան: Երբ որ պատանի Վիտտէն հասկացաւ նոցա դիտաւորութիւնը, նոցա կասկածը փարատելու համար՝ ամբիոնից ցած իջաւ և տախտակի առաջ շարունակեց դասը, երբեմն միայն թերթին նայելով: Այն ևս որպէս զի կարգայ հետևեալ նիւթը: Գովասանքը ընդհանուր էր և ոգևորութեամբ: Հաննովերի կառավարութիւնը վճուեց աւելի գումար նշանակել ի նպաստ նորա, քան իւր բաժինն էր. իսկ Կէմբրիջի դուքսը անձամբ խոստացաւ իւր շնորհն ու յանձնարարութիւնը, եթէ պատանին մի անգամ Անգլիա գայ: Քիչ յետոյ Պրուսսիայի թագաւորն էլ ապահովեց Վիտտէի ուսման շարունակութիւնը:

Այս դէպքից անմիջապէս առաջ, հազիւ 14 տարեկան պատանի Մուսայից սանը՝ փիլիսոփայութեան դոկտորի պատուին արժանացաւ: Այն է՝ զատկական տօներին նա հօր հետ գնացել էր Գիսսէն, ուր փիլիսոփայութեան ֆակուլտէտի անդամներից շատերը նորա հետ խօսեցին, խորին խնդիրների մէջ մտնելով: Ապա ֆակուլտէտի դեկանը ճաշի հրաւիրեց նորան և այնտեղ նա գտաւ խիստ ընտիր հասարակութիւն: Ճաշին յանկարծ ամենքը վեր բարձրացրին բաժակները, խմեցին նորա կենացը, անուանեցին

նորան „Doctor noster“ և դեկանը մատոյց նորան մի թուղթ, որով նորան պաշտօնապէս յայտնում էին ջերմ խօսքերով, թէ երէկ փիլիսոփայական Փակուլտետը միաձայն հաւանութեամբ որոշեց նորան ընծայել փիլիսոփայութեան դոկտորի արժանաւորութիւն, իսկ ապագրուած մրցանագիրը շուտով իրան կ'առաքուի: 1814 ապրիլի 10-ի մրցանագրի մէջ ասուած է. «Լեխաուէցի մատաղահասակ՝ սակայն այժմէն իսկ պանծալեօք հանրածանօթ՝ կարլ Վիտաէին, որ տարիքով պատանի՝ բայց գիտնականութեամբ կատարեալ այր է, այլ և օժտուած է չքնաղափայլ համեստութեամբ Գիսսէնի փիլիսոփայութեան ուսուցչաց կաճառը որդու հետ նաև հօրը մեծարելու համար, որին նա ամեն ինչ պարտական է, շնորհում է փիլիսոփայութեան վարդապետի աստիճանը, կարգը, իրաւունքները և այլն առ ի պատիւ»:

1814 ամառը պատանի դոկտորը մնաց Գեօտինգէնում, շարունակեց մաթեմատիկական և փիլիսոփայական ուսումնասիրութիւնները, լսեց արամաբանութիւն և վերլուծական քիմիա: Այս միջոցին մասնաւոր հոգսը այն եղաւ, թէ նա այսուհետև ինչպէս կարգադրէ իւր ուսումնական զբաղմունքը: Եթէ իմ նպատակս լինէր, ասում է հայրը, շուտ՝ հըռօնակել նորան, պէտք է մաթեմատիկական և բնագիտական ուսումը շարունակել տայի, որովհետև այդ ճիւղերում նա խիստ առաջ էր գնացել: Սակայն ես երկիւղ էի կրում, թէ նորա մատաղ հասակում վտանգաւոր կլինի այդ բաժիններում աւելի խորասուզուիլը: Ուստի վճռեցի, որ նա փորձէ ուսումնասիրել իւր մտքին անծանօթ միւս բաժինները և ապա 18 տարեկան հասակում անձամբ ընտրէ իւր ապագայ գործունէութիւնը: Ես առաջարկեցի, որ նա սկսէ սովորել ելլամտից և իրաւաբանական գիտութիւններ, մանաւանդ որ լաւ պատրաստութիւն ունէր այդ բաժնի համար:

Նոյն թուականին պատանի Գ-ը Վիտաէն թողեց Գեօտինգէնը Հայդելբերգ տեղափոխուելու համար, որ երևելի էր թէ իւր հրաշալի տեսարաններով և թէ իրաւաբանական բաժնով: Ճանապարհին ստացաւ Վէտտերբուրի ուսումնական ընկերութեան թղթակից անդամի վկայական: Այստեղ 4 կիսամեակում լսեց սկզբունք իրաւագիտութեան և պանդեկտներ (Յուսախնիանոսի յիմնաւորակ), հռովմայեցոց իրաւա-

գիտութեան մեկնութիւն, կաթողիկէ և բողոքական եկեղեցական իրաւագիտութիւն, գերմանացւոց քրէական իրաւագիտութիւն, և քրէական դատաւարութեան տեսութիւն, գերմանական մասնաւոր իրաւունք, աւաաական և առևտրական իրաւունք, դիւանագիտութիւն, քաղաքացիական դատաւարութեան տեսութիւն. և բացի այս բոլորից մասնակցում էր գործնական պարապմունքներին և վիճաբանութեանց: Այս միջոցներում Ռուսիայի և Աւստրիայի կայսրները պատուեցին նորան իրանց բարձր ուշադրութեամբ: Այս միապետներից մէկը (երևի Ռուսաստանի կայսրը) առաջարկեց նորան, որ իւր շքադիրների մէջ մանի, բայց հայրը երախտագէտ սըրտով հրաժարուեց այս շնորհից: Այսպէս վերջացաւ Կարլի համալսարանական ուսումը:

Հայդելբերգը թողնելուց առաջ նա ձեռք բերեց իրաւագիտութեան դոկտորի պատիւն ևս: Բացի մի ուսուցչապետից, որ հէնց սկզբից ետրհուրդ չէր տալիս նորան իրաւաբանութիւն ուսանել, միւսները բոլորն էլ յորդորեցին նորան տալ այդ քննութիւնը, որը պիտէս փառաւոր վերջացաւ, որ նա ստացաւ խիստ հազուադէպ առաջին կարգի վկայական 1816 թ. օգոստոսի 20-ին:

Հայդելբերգից Գ-ը Ախտէն գնաց Բերլին: Ճանապարհին ամեն տեղ վայելեց մեծամեծ մարդկանց յարգն ու պատիւը:

Հօր ծրագրով նա պէտք է Բերլինի համալսարանում առ ժամանակ իբրև մասնաւոր ուսուցիչ մնար, միևնոյն ժամանակ իւր ծանօթութիւնները ընդարձակէր և կարգաւորէր, գիտութեան մի քանի ուրիշ ճիւղերին ծանօթանար, աւելի աշխարհաստեսութիւն ստանար և այսպէս պատրաստուած մի երկար ուսումնական ճանապարհորդութիւն սկսէր:

Որպէս զի Բերլինում դասախօսելու իրաւունք ունենար իբրև մասնաւոր ուսուցիչ, Գ-ը Ախտէն պարտաւոր էր տեղական համալսարանի բնիկ կամ քաղաքացի գրուիլ, բանի որ ինքը դուրսն էր ստացել դոկտորութիւնը: Հայրը հաւատացնում է, թէ այս բանին ոչ ոք արգելք չէր դնում, որովհետև կանոնադրութեան մէջ մասնաւոր ուսուցչի հասակի համար՝ սահման չի դրուած: Եւ որովհետև Հայդելբերգում դոկտորութիւնը ստացել էր արդէն բոլոր ձևական կարգերը պահպանելով, այժմ մնում էր միայն, որ կամաւ

ընտրած առարկայից մի լատիներէն շարագրութիւն գրէ, իսկ համալսարանի առաջարկած նիւթի մասին՝ մի գերմաներէն դասախօսութիւն կարդայ, որպէս զի ուսանողները ճաշակ ունենան, թէ ապագայ ուսուցիչը ինչ եղանակով է աւանդում ուսումը:

Հայրը թագաւորին յայանեց իւր որդու մաագրութիւնը, որ իւր 1816 դեկտ. 3-ի արքայական պատասխանի մէջ ի թիւս այլոց ասում է, ընտրան և ձեզ մաղթում եմ յաջողութիւն և այսուհետև ևս ձեր որդուն յանձնում եմ իմ շնորհներին: Սակայն իրաւաբանական բաժնում Գ. ր Վիտտէի դէմ յուզուեցաւ մի ընդդիմութիւն, որի պարագլուխն էր Սաւինյի մեծահոգեակ իրաւաբանը: Վիտտէին համարում էին հասակով ահաս և երկնչում էին, թէ ուսանողները թերևս դժգոհ լինին, գուցէ և անկարգութիւն անեն: Ուստի գործը ձգձգեցին, մինչև որ վերջապէս հասցրին նախարարութեան վճռին, որ թէպէտ և յօգուտ Գ. ր Վիտտէի հաւանականութիւն տուեց, բայց և այնպէս հօր և որդուն խորհուրդ տուեց, որ մաագրութիւնը մի անգամ էլ լաւ կըշռադատեն: 1817 յունուարին Գ. ր Վիտտէն կարգաց լատիներէն դասը իրաւաբանական բաժնում, իսկ նոյն ամսի 25 ին հրապարակական դասախօսութիւն պիտի աւանդէր: Ներկայ էին 80-ի չափ ուսուցչապետներ և ուրիշ երևելի անձինք և մօտ 500 ուսանող: Բազմութեան պատճառով ունկնդիրները հարկագրուեցան փոքր լսարանից տեղափոխուել աւելի մեծ դահլիճ: Թագաժառանգը և երկու ուրիշ արքայազուներ կամենում էին իրանց ներկայութեամբ պատուել հանդէսը, բայց ստիպուեցան սանդուղից դառնալ, երբ որ նոքա չարամիտ մարդիկներից իմացան, թէ Գ. ր Վիտտէն արդէն ծաղրուել է (ոտնհարութեամբ) և ամեն ինչ վերջացել, մինչդեռ դասախօսութիւնը տակաւին չէր սկսուած: Մեծ լսարանը այնպէս էր լցուել, որ ասեղ ձգելու տեղ չը կար Գ. ր Վիտտէն բարձրացաւ ամբիոնը: Բայց հազիւ բերանը բաց արեց, ուսանողների մի մասը սարսափելի աղմուկ հանեց ոտնահարելով, գաւազանները դոփելով, շուացնելով և այլն: Սակայն Գ. ր Վիտտէն հանգիստ մնաց, մերթ դէպի խռովարարները նայելով, մերթ corpus juris (օրինաց հաւաքածոյք) գրքի վերայ, որ ունէր իւր առաջ և սպասում էր վերջինս:

Երբ մի հինգ բողոքից յետոյ Հանդարտութիւն տիրեց, նա ուզում էր սկսել դասախօսութիւնը, բայց խանգարեցին աւելի աղմկայոյղ անկարգութիւններով: Այս անգամ Փակուրտեաի մի քանի անդամներ տեղից բարձրացան հեռանալու համար, որովհետև այս հանգամանքներում իրանց ներկայութիւնը անօգուտ էին համարում: Իսկ միև ուսուցչապետները և ականաւոր մարդիկ մերժեցին հանդիսի դադարումը, որ միայն նշան կլինէր, թէ խռովարարների կամքն է իշխում, ուստի պահանջում էին, որ կարգ հաստատուի: Դեկանը ամբիսնից յորդորեց հանդարտ մնալ, բայց նա էլ բամահուեցաւ ոտնհարութեամբ: Նորա հրաւիրանօք Դ. ր Վիտտէն մի անգամ էլ փորձեց դասախօսութիւնը սկսել, բայց դարձեալ իզուր: Այդ միջոցին նա իմաց տուեց, թէ միայն մի քանի բառ ունի հանդիսականներին ասելու, ապա թէ ամէնքը հանգստացան: Նա ասաց. «Պարոններ, ես կամենում էի ըստ տրամադրութեան օրինաց հրապարակաւ դաս խօսել ձեր առաջ: Դուք լսել չէք ուզում և ինձ արգելում էք. ուրեմն ես կդադարեցնեմ: Բայց այստեղ ուրիշներ կան, որոնք այն յուսով են եկել, թէ ես դաս պիտի խօսեմ: Ուսուցչաց կաճառը և այս պատուական հիւրերը պատրաստ են ձեզանից աւելի մարգասիրութեամբ լսել, ուրեմն այնուամենայնիւ ես իմ դասը կը խօսեմ նոցա առաջ:» Հանգիստ դէմքով ասած խօսքերը արժանացան ընդհանուր հաւանութեան: Բայց կարգը դարձեալ դժուարութեամբ էր պահուում, մինչև որ դեկանը ուսանողներին ասաց. «Ով որ կարծում է, թէ իրաւունք ունի ոտնհարելու, թող նա մի քիչ սահմանի մէջ մանի, այնտեղ բաւական արձակ տեղ կայ:» Այս խօսքի վերայ խնդացին և աղմուկը մեղմացաւ. Դ. ր Վիտտէն օգուտ քաղելով դրութիւնից՝ սկսեց դասը, որև յաջողապէս շարունակեց առանց խանգարման: Նա խօսում էր արձակ, հանդիստ, սահուն և ընտիր գերմաներէնով, իսկ առարկան բացատրում էր հեշտ և յաջող կերպով: Ներկայ եղող ոչ ուսանողները նորան շնորհաւորեցին:

Թէպէտ իրաւագիտութեան բաժինը Դ. ր Վիտտէի ցոյց տուած հմտութեանց դէմ ընաւ ասելիք չունէր, բայց և այնպէս վերջինը չհասաւ իւր նպատակին, որովհետև Փակուրտեալը ի նկատի առնելով նորա հասակը և նորա դէմ լա-

րուած ուսանողներէ գրգիռը, թոյլ չը տուեց, որ դասացուցակի մէջ նշանակուին այն հրապարակախօսութիւնները, ինչ որ նա մտադիր էր եկող ամառը կարդալ: Նախարարութիւնը, ֆակուլտէտի կողմը բռնելով, հաշտութեան ճանապարհ բռնեց և առաջարկեց Դ-ը Վիտտէին, որ նա յանձն առնի երկու տարի ուսումնական ճանապարհորդութիւն անել, ստանալով տէրութիւնից առատ թոշակ:

Դ-ը Վիտտէի դէմ Բերլինի համալսարանի վարմունքը, նոյնպէս և նորա ուսումնական գրուածքները, որ այս միջոցներում տպագրուեցան, բորբոքեցին մի կատարեալ գրականական կռիւ, որ վարում էին բանաւոր և գրաւոր կերպով, գիտնական և քաղաքական թերթերում, մինչև իսկ յատուկ տետրներով: Այդ բանակռուի մէջ երկու կողմից ևս, թեր և դէմ, մասնակցում էին ամենանուանի ուսումնականներ և մամուլի հանդէսներ:

Հայրը, որ մինչև 1817 թուականը իւր որդու առաջնորդ և խորհրդական էր եղել, ուզում էր արդէն իւր դաստիարակութեանը վերջ տալ: Քիչ քիչ սովորցրեց նորան փոքրիկ ճանապարհորդութիւններ անել մէնակ և առանց հօր ուղեկցութեան, մինչև որ 1818 թ. պատանի Դ-ը Վիտտէն իւր մեծ ճանապարհորդութիւնն սկսեց: Երկու տարուց յետոյ, երբ որ դարձաւ, նշանակուեցաւ Բրեսլաուի համալսարանում իրաւաբանութեան արտաքոյ կարգի ուսուցչապետ, իսկ 1829-ին ըստ կարգի ուսուցչապետ: Աերջը նա տեղափոխուեցաւ Հալլէ, ուր մինչև այսօր (1857) ապրում է: <sup>1)</sup> Քացի մի քանի իրաւագիտական երկերից հրատարակել է իտալական գրականութեան, մանաւանդ Դանտէի մասին գրուածքներ:

1) Նա վախճանուեց 1883 թ. եւ մինչեւի վերջը իրաւագիտական եւ հումաւական գրականութեան նուիրեց իւր աշխատութիւնները, բայց ոչ մի աշխարհագրական գործ չը թողեց, ինչպէս որ հօր նետ ի միասին շատերը ավակալում էին: Յայտնի է, որ Սաքսոնեան Թագաւոր Յովհաննիսին շատ է օգնել Դանտէի թարգմանութեան մէջ, եւ որ այդ թագաւորի հովանաւորութեան ներքոյ մի ընկերութիւն է հիմնել Դանտէի ուսումնասիրութեան նշույլատակով:

Մինչև այժմ ճշտութեամբ նկարագրեցինք Կարլ Վիտտէի կրթութեան պատմութիւնը սկզբից մինչև վերջը այն նիւթերից, որ նորա հայրը մեղ թողել է: Մենք պարզ պատկերացնում ենք երեխայի, մանուկի և պատանու դաստիարակութեան էական մանրամասնութիւնները:

Եթէ լիակատար հաճատ էլ չընծայենք հօր անաչառութեան կամ նոցա, որոնք չէին համակրում դաստիարակութեան այդ եղանակին և եթէ ներելի լինի չափազանցութիւն համարել այն բոլոր գովեսաները, որ մխթարուած հայրը շուայլում է իւր որդու յառաջագիմութեանց մասին, — այնու ամենայնիւ ոչ մի հիմք չկայ ուղեղ չհամարել նորա հաղորդած իրողութիւնները:

Իսկ այդ իրողութիւններից ակնյայտնի հետևում է, թէ նկարագրած դաստիարակութիւնը ամեն մանկավարժի համար պէտք է հետաքրքրական և խրատական լինի: Քարոզիչ Վիտտէն արժանի է ամեն բանիմաց մարդու շնորհակալութեան նախ և առաջ այդ զարմանալի մանկավարժական փորձի համար. էլ չենք ասում, թէ որքան երևելի է նորա աչալրջութիւնը, հետևողականութիւնը և յարատևութիւնը, որով իւր գործը առաջ է տարել:

Հարկաւ նա այդ փորձով չապացուցեց դաստիարակութեան ամենազօրութիւնը, որովհետև այդպիսի գաղափարը ցնորք է: Ընդհակառակ եթէ ի մօտոյ քննենք հաղորդած տեղեկութիւնները, մենք կը գտնենք այդպիսի ամենազօրութեան նաև ներհակ ապացոյցներ: 2<sup>ն</sup>այելով որ բոլոր հանգամանքները կարծես հրաշքով միացան ձեռնարկութեան յաջողութեան համար, բայց այնու ամենայնիւ աշխարհային զանազան դրութիւններից, նախապաշարումներից և անձինքներից բղխած արգելքները՝ ապառաժի պէս անդիմադրելի մնացին:

Հօր ծրագրով, Կարլ Վիտտէի դաստիարակութիւնը մի ապացոյց պէտք է լինէր գործով՝ Հելուեցիուսի այն կարծիքի, թէ իւրաքանչիւր առողջակազմ մարդ կարող է կատարեալ մարդ դառնալ, եթէ լաւ կրթութիւն ստանայ: Այս կարծիքը այնպիսի տարօրինակ յայտնութիւններից մէկն է:

որ հարևանցի տեսութեամբ թուում է խիստ հանճարեղ իմաստութիւն, իսկ եթէ զտուի և վերլուծուի՝ դառնում է կամ սոււա կամ շատ հասարակ մի միտք:

Ամենագերազանց դաստիարակութիւնն անգամ միշտ և ամեն ժամանակ կախում կունենայ բնութիւնից և կեանքի շրջապատող հանգամանքներից. այս սյնքան ճշմարիտ է, որ եթէ մի մանուկ զուրկ լինի բնական ընդունակութիւններից կամ եթէ ապրում լինի անյաջող հանգամանքներում, երկնքից իջած դաստիարակչի ձեռքով անգամ կատարեալ մարդ չի դառնայ: Իսկ կարծել թէ անընդունակ մանուկներ չկան, իբր թէ բոլոր մանուկները ի բնէ ամեն կողմից իրար հաւասար ձիրքեր ունին, կամ թէ աշխարհքում անյաղթելի հանգամանքներ չկան, — անտոութիւն է: Բայց եթէ այդ բոլոր հանգամանքներն ու յարաբերութիւններն էլ դաստիարակող զօրութիւնների մաս համարենք, ինչպէս որ անշուշտ են, այն ժամանակ Հելլուեցիուսի տարօրինակ իմաստութիւնը՝ հետևեալ հասարակ մտքի կվերածուի, թէ մանուկը կատարեալ մարդ կդառնայ, եթէ բնութիւնը, կեանքը և մարդու կամաւոր դաստիարակութիւնը կատարեալ միութեամբ ներգործեն: Այն ժամանակ Հելլուեցիուսի ասածը կկորցնի իւր շլացնող փայլը և ամենահասարակ միտք դառնալով՝ ոչինչ գործնական ճանապարհ չի ցոյց տայ: Այդ բոլոր իմաստութիւնները պարզելով՝ մենք վերջ իվերջոյ այս ունինք ասելու, որ եթէ մի օր մանուկից կատարեալ մարդ պիտի դուրս գայ, այդ գործում անշուշտ դաստիարակութիւնն էլ մի խոշոր բաժին կունենայ, թէպէտ բոլոր գործը ամբողջապէս իւր արդիւնքը չի լինի:

Արդարև ով դաստիարակութիւնը ճանաչում է իւր բարեխիղճ փորձերից, նա ապացուցի կարօտ չէ և գիտէ, թէ դաստիարակութիւնը աւելի զօրաւոր դժ է, քան ինչպէս որ հնարաւոր են համարում շատ ծնողներ, կամ նոյն իսկ ի պաշտօնէ դաստիարակիչներ՝ իրանց անհոգութեան և անփութութեան պատճառով: Իսկ ով ապացոյց է կամենում ունենալ, նորան ոչ մի օրինակ չի կարողանայ այնպէս անհերքելի կերպով համոզել, ինչպէս կարլ Ախտեէի դաստիարակութեան պատմութիւնը: Ահա այս է նորա մանկավարժական մեծ նշանակութիւնը այժմ՝ եւ ապագայում:

Ով ինչպէս էլ դատէ Վիտտէ բահանայի անձնաւորութիւնը, ամենքը պիտի խոստովանին, որ նա իւր մէջ միացնում էր ընտիր դաստիարակչի յատկութիւններու Թօղ դեռահասակ Վիտտէի ընդունակութիւնները ի բնէ շատ բարձր համարուին, բայց և այնպէս տարակոյս չկայ, թէ նոքա առաջնորդուել են հոգեբանական և մանկավարժական հաստատութեամբ և ծաղկել են գեղեցկապէս:

Իսկ Կարլ Վիտտէի համար արդեօք մի բախտաւորութիւն էր, որ այնպէս կրթուէր, ինչպէս որ կրթուել է, կասկածեցի է և իրաւամբ Թէպէտ հայրը հաւատում է, թէ իւր որդու վաղահաս կրթութիւնից մեծ օգուտներ ծագեցին և ի հարկէ այս բանը գլխեիգլուխ չի հերքուի, սակայն նա շլացած չտեսաւ և այն փնասները, որոնք մասամբ 1817-ին երևան ելան, մասամբ էլ բնականաբար յետոյ պիտի նշմարուէին:

Ինչ անպատեհութեանց որ նա և իւր որդին հանդիպեցան, մեծ մասը ծագեցին մանուկի զարգացումը կանխեցնելուց, Հայրը ուզում է բոլոր մեղքը ձգել շարակամութեան և վատութեան վերայ, բայց տարակոյս չկայ, թէ ինքը շատ անգամ անարդար և զրպարտութեամբ է խօսում նոցա մասին: Մեղքը պէտք է փնտռուի այն բանի վաղահասութեան մէջ, որ մեր կեանքի բոլոր սովորութեանց և հաստատութեանց բացէիբաց հակառակում է: Մի 10 ամեայ ուսանող և 16 ամեայ ուսուցչապետ, ինչ կամենաք ասացէք, բայց չի յարմարում մեր աշխարհին և մեծ չափազանցութիւն է պահանջել, որ աշխարհը կերպարանափոխուի և ընթանայ անհասանելի քմաց համաձայն Գեռ և սինդիքի, արդեօք Կարլ Վիտտէն իւր մանկութիւնն ու պատանեկութիւնը իրօք վայելեց որպէս մանուկ և պատանի. բայց ասենք թէ նա սյս կողմից փնաս չկրեց, ինչպէս հայրը համոզուած է, մենք դարձեալ կարող ենք հարցնել, զարգացման այնպիսի վաղահասութիւնը ի՞նչ օգուտ բերեց աշխարհին, պետութեան կամ նոյն իսկ անհատին: Որ նա 16 տարեկան հասակում համալսարանական ուսուցիչ դարձաւ, օգուտ չբերեց ոչ ուսումնական աշխարհին, ոչ պետութեան. իսկ որդու կանուխ ապրուստը այնպիսի հանգամանք չէ, որ նիւթական խնդիրը այստեղ ի հաշիւ առնենք, մանաւանդ

որ հայրը երբէք այդ պատճառով չչտապեցրեց որդու զարգացումը, միշտ աւելի բարձր նպատակ աչքի առաջ ունենալով:

Իսկ այն փեսաները, որ կարլ Վիտտէն կրեց կանխահասութիւնից, անուրանալի են: Մարդկային ոգու ընդունակութեան չափը և բաւականութիւնը անսահման չէ, թէպէտ չենք կարող որոշել, թէ որտեղ է վերջանում մէկի սահմանը և որտեղ միւսինը: Նոյն իսկ մարդու մարմնի երկարութիւնը ընդհանուր չափից սովորաբար շատ չի անցնում, իսկ եթէ երբեմն մանկութեան ժամանակ խիստ արագ է աւելանում, այնուհետև աճումը նոյն համեմատութեամբ սկսում է դանդաղել: Այդ օրինակի մէջ երևում է մի ընդհանուր օրէնք, որով կառավարում է նաև ոգու աճումը՝ ծանօթութիւններով և զարգացմամբ: Գուցէ կարլի մէջ մինչև 20 տարեկան հասակը զարգացման յանկարծակի դադարում չի նկատուել, ինչպէս արդէն ոմանք ենթադրել են, բայց անուրանալի է, որ նորա մէջ այդ աւելի վաղ երևեցաւ, քան սովորաբար ուրիշների մէջ նշմարում է և թէ իւր վաղահաս կրթութեամբ աւելի արագապլլ և հեռու չքնթացաւ կամ աւելի լայն ասպարէզ չունեցաւ, քան նոքա, որոնք իրանից աւելի դանդաղ են զարգացել: Գոնէ յայտնի չէ, որ նա միւս ուսուցանականներից աւելի արդիւնաւոր հանդիսացած լինի ստեղծական հանձարով, կամ թէ իւր մասնագիտութեան պարագլուխներին հաւասարած լինի: Նա 16 տարեկան հասակում հաւասար էր կանգնած այն իրաւաբաններին, որոնք իրանից 8—10 տարով աւագ էին, բայց մի տասը տարուց յետոյ էլ ոչ մէկից չէր գերազանցում առանձնապէս:

Սորա հետ կապուած է աւելի նշանաւոր փեսաը, որ վաղահաս կրթութիւնից պիտի առաջնանար կարլ Վիտտէի կեանքում. նա քաջալերուած՝ այնպիսի յոյսեր դրեց իւր անձի վերայ, որ չկարողացաւ և չէ կարող լրացնել, որովհետև նոքա անիրագործելի էին և չափազանց: Ուստի և վերջերը վհատելով զգաց, թէ մի անգամ հասած բարձրութիւնից կարծես խոնարհում և գլորում է: Այսպիսի վհատութիւնը վաղահասի կեանքի մէջ մահացու հարուածէ, որից ազատ է ամեն մարդ, որ բնական ընթացքի և առանց

տարածամ դադարելու՝ հոգեպէս զարգանում է չշտապելով։ Հաստատ կարող ենք պնդել, թէ մասամբ կատարուեցաւ մի գուշակութիւն, որ 1811 թ. բարեկամներից մէկը՝ չափազանց ոգևորուած հօրը յայտնել է նամակով. «Զգուշացնում եմ, որ փոքր ինչ մտածէք, թէ ինչպէս պէտք է ազգէ նորա (որդու) վերայ այսօրուայ շարունակ սքանչացումը, որ ամեն կողմից վայելում է, որպէս մի արտաբոյ կարգի արարած և ինչպէս պիտի փոխուի նորա սրտի տրամադրութիւնը, կամ ինչպէս պիտի կարողանայ տանել հարուածը, եթէ իւր 20 կամ 21 տարուայ հասակում յանկարծ ոչնչացած տեսնի առաջուայ սքանչացումները, իսկ ինքը համարուի մի հասարակ մարդ։ Եթէ ես լինէի մանուկի հայրը, մի այսպիսի բաւականութիւն մեծ հոգս կպատճառէր ինձ։ Մի մարդ, որ ի մանկութենէ ընդհանուր հիացման առարկայ է եղել, խիստ մեծ ցաւ պիտի զգայ, եթէ շարունակ նոյն չափով ուշադրութեան չէ արժանանում»։

Եթէ անաչառապէս զննենք այն յարաբերութիւնները, որոնք կարլ Վիտտէի համար ստեղծուեցան իւր զարմանալի կանուխ զարգացմամբ, եթէ կշռենք այն ուշադրութիւնը, որ նորան ընծայեցին իշխանները, պալատականները, գիտնականները, այն հիացումը, որ այնքան բազմութիւն նորան նուիրեց, հռչակը, որ իւր մասին հեռաւոր շրջաններում տարածուեցաւ և այն պատիւները, որ նա մի այնպիսի հասակում վայելեց, երբ որ հասարակ մարդը մեր մէջ աննշանակ կորչում է, կամ առ առաւել սկսում է նշմարելի դառնալ միայն մերձաւոր շրջանում իբրև մի փոքր կէտ, — եթէ այս բոլորը ի նկատի առնենք, միթէ կարելի է հաւատալ, թէ էլ ոչ մի վնաս չը կրեց կարլի սիրտը։

Ինչքան էլ տոկոն էր և հեռուողականութեան տէր քարոզիչ Վիտտէն, այնուամենայնիւ տկարացաւ և հաւատարիմ չմնաց իւր սկզբնական մտադրութեան, որ չշտապեցնէ իւր որդու կրթութիւնը և այդ բանով չփայլէ։ Կարլ Վիտտէն մի այնպիսի անօրինակ երևոյթ էր աշխարհում, որ չը պէտք է զարմանանք, եթէ նորա երկամէ բնաւորութիւն ունեցող հայրը փորձանքի մէջ ընկաւ և մոռացաւ իւր սկզբնական ուխտը։ Ուստի ոչ թէ նորան դատապարտելու, այլ խնդիրը լաւ պարզելու համար, հարկաւոր է յիշել, թէ նա

ազատ չէր մարդկային մի թուլութիւնից՝ սնափառութիւնից: Բայց անշուշտ նորա գործը աւելի շատ կատարեալ կլինէր, եթէ նա փորձանքներին դիմանար և իւր որդւով փսյլելու առիթներից հեռու կենար:

Այս թուլութիւնը ասան, զգացին և մատնացոյց արին շատ նշանաւոր մարդիկ և ոչ թէ չարամտութիւնից գրգռւած, ինչպէս որ նախապաշարուած հայրը ենթադրում էր նոցանից մէկը 1817-ին գրում է որդուն. «— եթէ Սաւինյին ձեր նորագոյն ձգտման հակառակ հանդիսացաւ, այդ չի նշանակում, թէ նորա բնաւորութեան մէջ բիծ կայ, որովհետև որս մաքոյն էլ կարող էր անցնել, ինչ որ ես և ուրիշ հաղարները ասել ենք ձեր մասին. և այս մարդուն խոտորնակ ընթացք են տալիս»: Զանք են սպառում ցոյցի համար, շտապում են, որ շուտ խօսուի ձեր մասին, որ շուտ կազմուի բախտաւորութեան փայլը: Բայց հէնց այդ պատճառով դուք կարող էք խորխորաա ընկնել: Փայլելով վաղօրօք ցանկութիւնը հանգցնում է սրտի խորքերից բղձխող ճշմարտութեան ծարաւը, մարդկային երջանկութեան համար ջերմ կարեկցութիւնը, որոնց ոչնչանալու հետ, չը գիտեմ, թէ էլ ինչին պէտք է կարողանան ծառայել ձեր գիտութիւնները: Դուք պէտք է մինչև 18 կամ 20 տարին լուռ և անաղմուկ ստուերի մէջ դաստիարակուէիք, յետոյ բաւական ժամանակ կունենայիք, որ զօրացած և ամրացած ասպարէզ գայիք: Իմ ցանկութիւնս է եղել ձեզ միշտ կորուստներից յետ կացնել. երբ որ դուք կամենում էիք դոկտորութեան աստիճան ստանալ, ես ձեր հօրը բարեկամաբար զգուշացրի: Երդուեցնում եմ ձեզ ամեն սրբութիւններիով, լուրջ մտածեցէք ձեր վիճակի մասին մանաւանդ այժմ, երբ դուք արդէն ձեր ինքնիշխանութեան էթողնուած»:

Բոլոր ասածներից հետևում է, թէ այս մանկավարժական փորձը չի յաջողուել այն մաքոյն, ինչ մտքով որ նոյնը ծեռնարկուել էր: Բայց մենք առ ժամանակ ենթադրենք, թէ գործը կատարեալ կերպով պսակուել է, այնուամենայնիւ պիտի ասենք, թէ մանկավարժութիւնը ոչինչ վաստակ չէր ունենայ այդպիսի փորձից: Որովհետև Կարլ Վիտտէի կրթութեան ընթացքը չի կարող դառնալ ընդհանուրի և ոչ իսկ բազմութեան ընթացք: Ո՞րտեղ գտնենք այնպի-

«Ի հազուագիւս դաստիարակ, որպիսին էր Վիտակ: քարոզիչը. նմանապէս հազիւ թէ երբ և իցէ միւս բոլոր հանգամանքները այնպէս նպաստաւոր կերպով միանան:

Այս էլ ենթադրենք, իբր թէ Վիտակի կրթութիւնը կարող է ընդհանրանալ. դարձեալ ամենքը պիտի հրաժարուին մանկական միտքը այնպէս վաղ և արագ դարգացնելուց այն պատճառով, որ այդպիսի յաջողութիւնը շատ թանկ պիտի նստի: Եթէ բազմաթիւ մանուկներին միասին կրթենք, լուսի պէս պարզ է, որ երբէք նոյն արդիւնքը չենք ստանայ: Մնում է ուրեմն, որ իւրաքանչիւր մանուկ իւր սեպհական դաստիարակն ունենայ. այսինքն աշխարհում որքան սանձայնքան դաստիարակ պիտի լինի: Բայց այս կլինի դժբերի սպառումն, համապատասխան չի լինի ոչ մեր միջոցներին և ոչ սպասելիք արդիւնքին:

Բայց մեր բոլոր ընդդիմախօսութիւններից բնաւ չը պէտք է նսեմանայ Վիտակի մանկավարժական փորձի կարևորութիւնը: Նորա իսկական նշանակութիւնը այն է, որ գործով ապացուցուել է թէ որքան արդիւնք է արատադրում լաւ ծրագրուած, հետևողութեամբ և յարատևութեամբ առաջնորդուած կրթութիւնը:

Հարկ չկայ աւելացնել, թէ ոչ ոք այնքան անմիտ և միամիտ չի լինի, որ ուզենայ Վիտակի դաստիարակութեան եղանակը կէտ առ կէտ փորձել. իսկ նորա մի բանի մասնաւորութիւնները, որոնք անհաւանելի են և իսպառ մերժելի՝ արդէն ակնարկել ենք և ինքնին հասկանալի են: Մնում է միայն յարակցել, թէ բնաւ խորհուրդ տալու բան չէ, որ մանուկները շուտ շուտ տարուին թատրոն, համերգ, ակումբ և այլն, ինչպէս որ քարոզիչ Վիտակն իւր որդուն շրջանում էր: Շատերի համար այս սովորութիւնը ուղղակի վատանգաւոր կլինի: Այդ ընթացքով մանուկը չափից դուրս իւր մանկական կեանքից վեր է գնում, մի աշխարհ է մըռնում, որ հասկանալ չի կարող, այնպիսի համ է ճաշակում, որ առ ժամանակ արգելուած պիտի լինին և նա շատնում, շշմում, թմրում, թունաւորւում է: Վաղօրօք թատրոն յաճախելը փնասակար է մանաւանդ, եթէ մանուկի երևակայութիւնը՝ վառ, զգացմունքը դիւրագրգիռ է: Հասակաւորների ակումբների մէջ երթեկեկութիւնը անշուշտ օգ-

տակէտ է մանուկի հասկացողութեան զարգացման համար, բայց սրտի կրթութեան համար՝ վտանգաւոր կարող է դառնալ: Որովհետեւ՝ այստեղ ամեն ինչ կախուած է հասակաւորների բնաւորութիւնից և վարմունքից, մանուկի պատկառանքից և այն առաջնորդութիւնից, որ բախտի բերմամբ նա վայելում է: Քարոզիչ Վիտտէի հայեացքը, թէ ուրիշ մանուկների ընկերակցութիւնը աւելի շար է քան բարի, նոյնպէս մի մոլորութիւն է: Վերջապէս որքան որ գովելի գանձեր քարոզիչ Վիտտէի տան մէջ ընդունած բարեպաշտական կարգերը, այնուամենայնիւ թւում է, թէ այնտեղ շատ անգամ մեղանչել են այն պատուէրի դէմ, որ հրամայում է. «Մի առնուցուս զանուն Յեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց»: Ամենամեծ զգուշութիւն է հարկաւոր, որ բարեպաշտութիւնը սրտի մէջ հաստատուի և ոչ թէ լեզուի ծայրում:

Բայց եթէ անկողմնակալ ենք ուզում մնալ, ի վերջոյ պէտք է այն էլ խոստովանենք, թէ մանուկ Վիտտէի կըրթութիւնը շատ կողմերից օրինակելի էր և միշտ արժանի, որ յարգեն և նմանեն:—Նախ և առաջ յիշենք այն մեծ խնամքն ու ճշտութիւնը, որով քարոզիչ Վիտտէն դաստիարակում էր իւր որդուն: Նորա համար մանուկը այն կենդանուն էր, որի շուրջը պտտում էր իւր ամբողջ կեանքը. նա ապրում և գործում էր միայն իւր որդու համար: Ամենայն ինչ՝ խօսքն ու լուրթիւնը, ելն ու մուտքը, աշխատութիւնն ու հանգիստը, մերձաւոր ու հեռաւոր շրջապատող հանգամանքները, անձինքն ու իրերը—նա յարմարեցնում էր իւր սանին և ծրագրած դաստիարակութեան նըպատակին: Միւսնոյն ժամանակ նորա տոկունութիւնն ու յարատեւութիւնը այնպէս անսպառ էին, որ նա գրեթէ 20 տարի շարունակ միշտ միւսնոյն ուժով անձանձիր գործեց այդ նպատակին հասնելու: Թէպէտ ոչ ամեն դաստիարակ այն բնութիւնն ունի, ինչ որ ունէր քարոզիչ Վիտտէն և ոչ ամեն հայր այնպէս յաջող հանգամանքներում է ապրում. բայց ձեռքը սրտին խոստովանենք, —արդեօք չե՞նք կարող մեր զաւակների կրթութեան աւելի ժամանակ և ջանք նուիրել, քան ինչ որ սովոր ենք անելու, առանց մեր հանգիստը, գործքերը, պարտականութիւնները թուլացնելու:

Թիթէ չե՞նք կարող աւելի խնամով հոգայ մեր զաւակների բախտաւորութիւնը. միթէ սյրպէս աւելի երջանիկ չէին լինի նոքա, բան եթէ միայն երկրաւոր գանձեր հաւաքէինք նոցա համար:

Մանուկ Վիտաէի առաջին տարիների մարմնական խնամատարութիւնը օրինակելի էր ամեն կողմից, որով ծնողների հեռատեսութիւնն է երևում, թէ անօգնական մանուկին նուիրած խելացի խնամքը՝ ուշ հասակում մէկը հարկւրով է վարձաարւում, որովհետև մարմնական ու հոգեկան ընդունակութիւններն ու զօրութիւնները՝ յետոյ ծաղկում են ամենաբեղմնաւոր կերպով:

Առանձին մտադրութեան արժանի է այն եղանակը, որ Վիտաէն իւր որդուն նորա մատաղ հասակում հաղորդում էր իրերի մասին ծանօթութիւններ մեծ չափով, բայց ոչ թէ գրքերից, այլ նոյն իսկ կեանքից, որով նորա հասկացողութիւնը զարթեցնում և զարգացնում էր գեղեցիկ կերպով: Այս նպատակին գործ դրած նորա միջոցները գուցէ ամենքը յարմար չլինին նմանելու համար, բայց տարակոյս չկայ, որ խիստ օգտաւէտ է բազմաթիւ աւիթներ աւելնուկին, որ իրերի ծանօթութիւնը ստանայ կենդանի կեանքից: Վասն զի մի մշտնջենական ճշմարտութիւն է, թէ որքան մարդ աւելի իրեր ճանաչէ իւր զգայարանքների օգնութեամբ կամ անմիջական զննութեամբ, այնքան աւելի նիւթ կունենայ խորհելու, այնքան աւելի հակում կ'ունենայ համեմատելու և զանազանելու, հետախուզելու և ընտրելու, կամ առհասարակ մտածելու և անշուշտ մի դաստիարակչի վստահը մեծ է, եթէ իւր գործ դրած ջանքերով, իւր սանը սովորել է միշտ մտածել, երբ մի բան տեսնում, կամ խօսում, կամ գործում է:

Նոյնպէս հետևելու արժանի է և այն սկզբունքը, որ մանուկը փոքրութիւնից վարժուի ամեն ինչ դիտել ճշդութեամբ, ամեն ինչ արտայայտել ուղիղ, ամեն կատարելիք ըստ չափու կարեաց կատարեալ լաւ. սա մի հաստատուն հիմք կլինի ապագայում ուսումը անշուշտ յաջողեցնելու համար:

Քարոզիչ Վիտաէն կարողանում էր իւր որդուն ուսումը սիրեցնել և նորա համար դժուարամարս նիւթերը դիւրաց-

նել—զուարճալիքներով: Յայտնի է, որ չոր ու ցամաք դասը, ցուրտ պաշտօնական դէմքը դժուարացնում է ուսումը. նոցա աշխատասիրութիւնը զարթեցնելու համար, շատ անգամ պատժից ու սաստից աւելի զօրաւոր միջոց չի ճանաչուում, որով հոգեկան գործունէութիւնը անտանելի պատուհաս է դառնում: մինչդեռ արտաքին գրաւիչ կախարդանքը արդէն ինքնին յօտարութիւն և ուրախութիւն է ծնում, որով ներքին դժուարութիւնը անզգալի է դառնում:

Ուսուցման էական սկզբունքներից մէկն է համարվում, որ աշակերտի ինքնօգնութիւնը միշտ արթուն պահուի: Այս կողմից էլ Վարլ Վիտտէի հայրը մեծ վարպետ էր, որ դարձեալ գեղեցիկ օրինակ է դառնում ամեն ուսուցչի համար:

Օտար լեզուներ սովորցնելու եղանակը, ինչպէս այդ ցոյց տուեց քարոզիչ Վիտտէն, շատերը ուղիղ չեն համարում. մենք կ'ասենք, որ դասարանական ուսուցման համար արդարև սակաւ յարմարութիւն ունի: Բայց և այնպէս այնտեղ էլ կան ինչ ինչ մանրամասնութիւններ, որ ճշմարիտ են և ընդհանրանալու արժանի:

Գերմ. Թարգմ. Մ. Մանդրինեան.

